Вот один из уроков этой чудесной, мудрой, теплой, очень доступной читателям любого возраста авторской сказки на историческую тему.

Как и положено традиционной сказке, в этой так же есть герои и их антиподы, четвероногие, и злые и добрые, да и цари, мягко говоря, непохожие.

Ну, конечно, живет в этой сказке и очень милое, нежное существо – девочка по имени Астхик, чье имя стопроцентно соответствует его содержанию – «звездочка».

Другой немой, но зримой звездой здесь является Сукиас Торосян, художник, великолепно оформивший и проиллюстрировавший эту очень нужную сегодняшним детям книгу.

Заговорил по-русски квартет переводчиков: княгини Мэри Оганян и Сэда Меликсетян, князя Меружан Арутюнян и Арсен Торосян. А им хочется сказать по-армянски – «шноракалутюн».

Под занавес хочу привести ещё одну цитату из сказки.

На возмущение царя Мидии – почему правитель Сюника не падает перед ним

нищ – вот что тот услышал:

– Я не раб, чтобы падать перед тобой на колени. Народ мой свободен, и тебе не покорить его никогда!

Прототип книжного героя повторил слова реального армянского царя Тиграна, сказанные им 2500 лет тому назад. И любой правитель, как бы он ни назывался, готов, обязан сказать эти слова и СЕГОДНЯ, в XXI веке новой эры.

Роберт БАБЛОЯН.

Москва. 30.06.2015

Մենք կարող ենք ստեղծել կայացած ու զարգացող Հայրենիք, եթե ունենանք հզոր Հայաստան և հզոր Սփյուռք. Ալեքո ՊԵՋԻԿՅԱՆ

Աշխարհապիտու հայությունը պոկված մարգարայա ապարանջանի հմայքն ունի այս ու այն կողմ ցրված մարգարիտները փայլում են առանձնահատուկ որակ ու հմայք հաղորդելով շրջակա միջավայրին:

Այդ մարգարիտներից յուրաքանչյուրն անուրանալի արժեք ու հարստություն է իր շրջակայքի համար, նրանցից յուրաքանչյուրի գոյությունն առանձին-առանձին էական է ու բովանդակային, մինչդեռ միասնական մեկ շրջայով նրանց փայլն ու հանձարը ոչ թե շրջակայքը, այլ ամբողջ աշխարհն է զարդարում:

Տաղանդավոր հայի կյանքն ու գործը պատիվ ու համբավ է բերում յուրաքանչյուր երկրին, բայց նրանք հանձարեղ են միասին իրենց Հայրենիքում:

Հենց այս փաստը քաջ գիտակցելով՝ 20-րդ դարակազմին թուրքն իրականացրեց Հայոց ցեղասպանությունը ոչ միայն հայկական պատմական տարածքները «թուրքացնելու», այլև «այդ տարածքներում» ապրող ու արատրող հայի հանձարը արմատախիլ անելու, երկրի երեսից վերացնելու համար:

Մի մարգարտի պատմություն

Ալեքո Պեճիքյանի հայրը՝ 6-ամյա Արամը միակն էր ողջ ընտանիքից, որ փրկվեց Հայոց ցեղասպանությունից ու հասնելով մինչև Լիբանան, ամուսնացավ իրեն բախտակից հայուհու հետ:

Արամի որդին հետագայում պիտի մեծանար ու դառնար Եվրոպայի հաջողակ բիզնեսմեններից մեկը՝ մինևույն ժամանակ գիտակցելով, որ ինքը հայազգի մարգարտե շոթայի մի հատիկն է, որ իր գենի ու տեսակի համար պարտք է այն փոքրիկ, նորաստեղծ Հայաստան-Հայրենիքին, որն անկախացավ Մեծ եղեռնից 77 տարի անց միայն:

Ալեքո և Անի Պեճիքյանները վերջերս Հայաստանում էին կատարելու հերթական բարեգործական քայլը: Հունիսի 13-ին նրանք մասնակցեցին «Անի Պեճիքեան» անունը կրող երիտասարդական կենտրոնի բացմանը, որտեղ անվճար իրենց ուսանողական տարիները կանցկացնեն Հայաստանի տարբեր մարզերից Երևան ուսանելու եկած անապահով ընտանիքների կամ մանկատների աղջիկները:

Մենք պատիվ և հնարավորություն ունենանք գրուցել տեր և տիկին Պեճիքյանների հետ:

– Պարոն Պեճիքյան, Ձեր և ձեր տիկնոջ՝ Անիի ծնողները փրկվել են Հայոց ցեղասպանությունից, պատմեք խնդրեմ Ձեր ընտանիքների պատմությունը:

– Այո, և իմ, և տիկնոջ Անիի ծնողները Արևմտյան Հայաստանից էին. հայրս Արամը և մայրս՝ Պերճուհին Ադանայից էին, տիկնոջս հայրը Ձեյթունից էր, իսկ մայրը՝ Ուրֆայից:

Հայրս Հայոց ցեղասպանության տարիներին պատահած ծանր ընտանեկան վերհուշ է թողել մեզ: Հորս եղբորը՝ 17-ամյա Ալեքսանդրին թուրքերը զլխատել են իր և

ծնողների աչքի առաջ, հետո վերացրել ամբողջ ընտանիքը: Փրկվել է միայն 6-ամյա Արամ հայրս, որ գաղթի ճամփան բռնած՝ քարավանի հետ անապատներով հասել է Հայեայ ու մինչև 12-13 տարեկանը ապրել «Թոչնոց բուն» որբանոցում: Հետո հայրս դերձակություն և ընթերցանություն է սովորել, ամուսնացել մորս հետ ու հիմնական բնակություն հաստատել Լիբանանում: Որոշ ժամանակ անց կարողացել է ընդլայնել գործունեությունը և կարի արտադրամաս է հիմնել:

Ընտանիքիս պատուհասած՝ հորեղբորս ողբերգական մահն էր պատճառը, որ հայրս ինձ անվանակոչեց ոչ թե իր հոր, այլ վաղամեռիկ եղբոր Ալեքսանդրի անունով:

Մեր ընտանիքում ես չորրորդն էի՝ երեք քույրերիցս հետո լույս աշխարհ եկած՝ այնքան ցանկալի արու զավակը, օջախի ծուխը:

– Աշխատանքով լեցուն ու պատասխանատու պատանեկության և երիտասարդության տարիներ եք ապրել՝ արդարացնելով մեծ վիշտ տեսած Ձեր ծնողների հույսերը: Մինչև ո՞ր թվականը մնացիք Լիբանանում:

– Մինչև 1975-1976 թվականները: Հիմնական կրթություն ստանալուց հետո ընդունվեցի բարձրագույն ուսումնական հաստատություն, ինչը սակայն անհանգրստացրեց հորս. ինչպե՞ս պիտի շարունակեի ընտանեկան գործը և ինչպե՞ս պիտի օգնեի իրեն պահել ընտանիքը: Այդ մտավախությունն ինձ ստիպեց ընդունվել աշխատանքի. աշխատում էի առավոտյան ու գիշերը, իսկ ցերեկը ուսանում, օրս տևում էր նվազագույնը 18 ժամ: Այդպես հառաջացա և մեր ընտանիքը կարողացավ ընդլայնել գործը մինչև 1970 թ., այդ տարին մահացավ հայրս: Մայրս ավելի շուտ՝ 1968-ին էր մահացել 54 տարեկան հասակում:

Ի դեպ, ուսանողական տարիներիս մասին խոսելիս չեմ կարող չհիշել մի արտահայտություն, որ հաճախ էր ընկնում ականջիս «հայու կտոր մըն է»: Արաբներն այդպես էին վերաբերվում իրենց լեզվին չտիրապետող այլազգիներին: Սակայն այդ արտահայտությունն ստիպեց ինձ, որ սովորեմ ու հաղորդակցվեմ արաբերենով ավելի լավ, քան իրենք արաբները:

Ես Դաշնակցական եմ և իմ գաղափարական ուսուցիչը Միմոն Կրացյանն է, իսկ հոգևոր դաստիարակս՝ երջանկահիշատակ Ջարեհ Առաջին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն էր, ում անունով էլ կոչեցի կրտսեր որդուս:

Կրթվելով և ամուսնանալով Անիի հետ Լիբանանում՝ մենք ունեցանք երկու զավակ՝ Արամ և Ջարեհ: Այնուհետ որոշեցինք տեղափոխվել Բոսնիա և այնտեղ շարունակել հորս գործը՝ ավելի մեծ ծավալներով ու միգրացե ավելի լավ որակով կազմակերպության անունը՝ բոլոր ժամանակներում թողնելով նույնը՝ «Արամ հաստատություն»:

– Պարոն Պեճիքյան, Դուք և տիկին Անիս այսօր այնքան խանդավառ եք, ծրագրերով

ու կյանքով լի, որ ձեզ պիտի ձգտեն նմանվել ու հասնել շատ երիտասարդներ: Ո՞րն է երիտասարդ մնալու Ձեր գաղտնիքը և ի՞նչ էր Ձեզ սպասվում Բոսնիայում:

– Նախ ասեմ, կնոջս ճանաչում եմ ավելի քան 52 տարի և 47 տարի է ամուսնացած ենք: Կյանքում ամեն բանի հասել ենք միասին, ինչ որոշել ենք ու ստեղծել, միասին ենք արել:

Մեր երիտասարդ մնալու գաղտնիքը աշխատանքն է: Կարծում եմ, մարդ միշտ պետք է ձգտի հասնել ավելիին, նպատակ դնի իր առջև ու ջանքեր չինայի այդ նպատակին հասնելու համար: 36 տարի ապրեցինք ու աշխատեցինք Բոսնիայում: Մեր որդիներին լավագույն կրթություն տալը առաջնահերթություն համարելով՝ որոշեցինք 13-ամյա Արամին և 11-ամյա Ջարեհին ուղարկել Շվեյցարիա՝ այնտեղի լավագույն գիշերօթիկ դպրոցներից մեկում ուսանելու: Յոթ տարի նրանք սովորեցին ու ապրեցին մեզանից հեռու Շվեյցարիայում՝ դառնալով ինքնուրույն և կայացած տղաներ:

Արամին և Ջարեհին կրթություն տալու գործում կարևորել ենք ոչ այնքան ըստ մասնագիտության աշխատանք գտնելը, որքան կրթվելու ընթացքում ուղեղը մարզելու և աշխարհայացքն ընդլայնելու հնարավորությունը:

Սակայն կար մի հանգամանք, որ ամենակարևորն էր որդիներիս դաստիարակության գործում. նրանք պիտի քաջ գիտակցեին, թե ով է հայը, իրենց յուրաքանչյուր քայլով բարձր պիտի պահեին հայի պատիվն ու արժանապատվությունը, պիտի տիրապետեին մայրենի լեզվին:

Հայեցի դաստիարակության, փայլուն հայերենով հաղորդակցվելու ամբողջ գործը կնոջս Անիի ուսերին էր, և այսօր վստահ կարող եմ ասել, որ կնոջս շնորհիվ ոչ միայն Արամն ու Ջարեհը, այլև մեր թոռնուհին՝ 9-ամյա Անին, հրաշալի տիրապետում է հայերենին:

Այս առիթով մի ուրիշ հետաքրքիր դիտարկում ևս: Մենք համոզված ենք, որ ազգային պատկանելության, օտար ափերում ազգային ավանդույթներից չհեռանալու լավագույն հնարավորություն է հայկական խոհանոցը: Իմ կինը տանը մշտապես պատրաստել է հայկական ավանդական ճաշեր: Պարզ բան ասեմ՝ երբ որդիներս ընկերներով գնում էին որևէ ճաշարան, ռեստորան կամ սննդի արագ սպասարկման սրահներ, նրանցից ոմանք պատվիրում էին սպագետտի, մյուսները՝ McDonald's, իսկ Արամն ու Ջարեհը՝ քյաբաբ ու քյուֆթա: Նույնիսկ պատվիրելու ընթացքում հարց էր ծագում՝ ի՞նչ ազգության ուտեստներ են և ի՞նչ համ ունեն:

Հայկական խոհանոցը տան մեջ և յուրաքանչյուր պատանու ճաշացանկում տարիների հետ ազգային ինքնության գիտակցության միջոց է դառնում:

– Երկար տարիներ Հայ դատի գրասենյակ

193

Կի աշխատակները եք իրականացել, իսկ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին թանգարանի եք վերածել Եղեռնից մազապուրծ հայ մանուկների երբեմնի որբանոցը:

– Բուսակալում մենք ապրեցինք 36 տարի, որից հետո ընտանեկան գործերի անհրաժեշտությունից դրդված տեղափոխվեցինք ու մինչ այժմ ապրում ենք Շվեյցարիայում: Բուսակալում ապրելու ողջ ժամանակահատվածում և մինչ օրս ծառայել եմ Բյուրսելում գտնվող Հայ Դատի գրասենյակին: Երկար տարիներ է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության ներկայացուցիչն եմ Վատիկանում: Բուսակալում հիմնել եմ Հայ մարմարաթանգարանը՝ ընդհանուր միության մասնաճյուղը (ՀՄԸՄ), որտեղ հայոց լեզու և հայ ժողովրդի պատմություն են ուսուցասիրում հարյուրավոր հայ մանուկներ: Շվեյցարիայում նույնպես շարունակում եմ Հայ Դատի գործը:

Մի բան, որ անպայման կուզեի շեշտել, ամեն տարի Ապրիլ 24-ը մեր կազմակերպությունը հայտարարում է ոչ աշխատանքային: Մեզ հետ համագործակցող եվրոպական տասնյակ ընկերությունների ու կազմակերպությունների հարյուրավոր ներկայացուցիչներ առիթ են ունենում հետաքրքրվել դրոշմապատկերների մասին: Մենք ամեն տարի խոսում և բարձրացնում ենք 1915 թ. Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանությունների կողմից իրականացված սոսկալի ոճի մասին: Շվեյցարիայի մեր գործընկերները հաշվի են նստում և հարգում հիշատակի ու ցավի օրվա շրջանակներում նախատեսված մեր բոլոր արարողությունները:

Շուտով հուլիսին, տեղի կունենա Հայոց ցեղասպանության թանգարան դարձած հայ մանուկների երբեմնի որբանոցի վերաբացման հանդիսությունը: Ընտանեկան ուժերով մենք վերակառուցեցինք հորս մանկության տարիների կացարանը՝ «Թռչնոց բույն» որբանոցը դարձնելով այն Հայոց ցեղասպանության թանգարան:

– Պարոն Պեգիբյան, 1988-ի Սպիտակի երկրաշարժի տարիներին Ձեր ներդրումն ու անմաքուրդ նվիրումն եք բերել՝ օգնելով ոտքի կանգնել հարյուրավոր որբերի: Պատմեք մի փոքր այդ ժամանակների մասին:

– Այո՛, ցավով պիտի արձանագրեմ, որ առաջին այց Հայրենիք եղել է 1989 թ.՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո: Մենք հիմնեցինք «Բերգամ-Սպիտակ» համերաշխության հիմնադրամը, որը ոչ միայն երկրաշարժի առաջին տարիներին, այլ 18 տարի շարունակ օգնեց ոտքի կանգնել հարյուրավոր հայ որբերի: 350 երեխայի 18 տարի շարունակ ապահովեցինք առաջին անհրաժեշտության ամեն ինչով՝ սնունդ, կացարան, բժշկական, կրթական ծախսեր: Մենք չցանկացանք որբերին թողնել մանկատներում, նրանց համար գտանք խնամակալ ընտանիքներ: Ամեն տարի սեպտեմբերին 15 օրով գալիս էինք Հայաստան, և մեզ հետ ծանրոցներ էինք բերում աղետից տուժած երեխաների համար: Հաճախ հագուստն ու գրենական պիտույքներն այնքան շատ էին լինում, որ բաժանում էինք Սպիտակի մյուս բնակիչներին:

րին: Կուզեմ նշել, որ կապ ենք պահել մեր ինստիտուտային ներքո գտնվող բոլոր երեխաների հետ, հոգացել ենք նրանց դպրոցական, ըստ անհրաժեշտության վերահստակման ծախսերը: Իսկ երբ հասավ բուհեր ընդունվելու ժամանակը, մենք համաձայնության եկանք ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ և համատեղ ուժերով հոգացինք 42 գերազանցիկների վարձավճարները, ովքեր ընդունվեցին երևանյան տարբեր բուհեր: Մեր սաներից շատերին տեղավորեցինք աշխատանքի սպասարկման ոլորտներում, որպեսզի ինչ-որ չափով հոգան իրենց կեցության ծախսերը և ի վերջո կայանան որպես ինքնուրույն մարդիկ: Վճարել ենք մեր երեխաների Երևանում վարձակալած բնակարանների գումարները:

Վերջին տարիներին նրանցից ոմանք ամուսնացան ու մենք էլ դարձանք նրանց կնքահայրն ու կնքամայրը: Հենց այսօր մեզ պիտի հյուրընկալվեն երկու քույրեր, որոնցից մեկը՝ Հերմինեն, փոքր տարիքում աչքերի հետ կապված խնդիր ուներ և այստեղ ապրում էին, թե կկուրանա: Կինս, չհամակերպվելով այդ մտքին, երեխային իր հետ տարավ Բուսակալ: Երկու ամիս մեր տանը մնալով՝ աղջնակին տարանք լավագույն մասնագետների մոտ, Հերմինեն վիրահատվեց, և այսօր հրաշալի տեսնում է: Այսօր արդեն նա հաջողությամբ մեծացնում է իր փոքրիկին:

– Դժվար չի կռահել, թե ինչու որոշեցիք կառուցել «Անի Պեգիբյան» երիտասարդական կենտրոնը: Կարծում եմ, ձեր փորձից ելնելով՝ նպատակ եք ունեցել անպահով ընտանիքների երիտասարդների համար ստեղծել ուսումը շարունակելու անհրաժեշտ պայմաններ:

– Ճիշտ էք, մեր 42 պատանիների ուսանող դասնախումբը հետո ավելի լավ պատկերացրինք այն խնդրները, որոնց բախվում են մարզերում ապրող անապահով ընտանիքների կամ մանկատներում ապրող երեխաները: Նրանցից շատերի համար բարձրագույն կրթություն ստանալու՝ հաճախ անհաղթահարելի խոչընդոտ է դառնում մայրաքաղաքում կացարան գտնելու խնդիրը: Երկար փնտրտուքից հետո ի վերջո Թբիլիսյան խճուղու վրա ձեռք բերեցինք հարմար հողակտոր, որտեղ էլ կառուցեցինք 40 սենյակից բաղկացած կենտրոնը: Շնորհակալ ենք ՀՀ սփյուռքի նախարար Հրանտի Հակոբյանին, որ գնահատեց մեր գործը և իր ներկայությամբ պատվեց կենտրոնի բացման արարողությունը:

Անարատ Հղության Հայ Քույրերի միաբանության և քույր Արուսյակի վերահսկողության ներքո կենտրոնում կապրեն Հայաստանի տարբեր մարզերից երևանյան բուհերում ուսանելու տեղափոխված անապահով ընտանիքների երեխաները կամ որբերը: Կենտրոնը նախատեսված է միայն աղջիկների համար և այստեղ բնակվող հայուհիները կարող են մտալ նաև ուսուցիչ ավարտելուց հետո, աշխատել ու ապրել մինչև ամուսնանալը:

– Պարոն Պեգիբյան, Դուք և տիկին Անին, լինելով հեռատես, հոգ եք տարել, որ Ձեր թոռնուհու մեջ ծնվի ու ապրի սերը Հայրենիքի հանդեպ: Այսօր Անին Ձեզ հետ միասին կտրեց նորակառույց երիտա-

սարդական կենտրոնի կարմիր ժապավենը: Եվ չնայած Անիի մայրը հայուհի չէ, միևնույնն է՝ հազարավոր մղոններ հեռավորության վրա աղջնակ մեծանում է կատարյալ հայի արժեանակարգով:

– Երբ ես և կինս իմացանք, որ մեր առաջին թոռնիկը պիտի ծնվի, երկար ժամանակ մտածում էինք ինչ նվիրել նրան: Ի վերջո հասկացանք, որ Անիի նվերը խորհրդանշական պիտի լինի: Մենք Եվրոպայի լավագույն վարպետներից մեկին պատվիրեցինք կտավ, որի վերևի հատվածում՝ խաչի ներքո, ամբողջությամբ ոսկուց Հայաստանի քարտեզն է իր լեռներով ու Արարատյան դաշտավայրով, մի քիչ ներքև Կիլիկիան է, ավելի վարը՝ Լիբանանը: Կտավի ձախից ներքևի մասում, Բուսակալ է պատկերված սրունքի տեսքով, իսկ աջ կողմում մեր պատգամը՝

Հայրերի, որսն որ կ'ապրիս հեռուն,
Մի մոռնար քու անուշ մայր լեզուն,
Կառչած մասցիկ միշտ արմատներուդ,
Յարգել ու սիրել յիշատակը
նախահայրերուդ:

Կտավը Անիի ննջասենյակում ծննդյան առաջին իսկ օրվանից գարդարում է մահճակալի դիմացի պատը խոսելով նրա հետ ու ճշգրիտ ճանապարհով ուղղորդելով Անիին այս մեծ աշխարհում:

Ամբողջ նրա սենյակն է մի լուսավոր եռագույն գարդարված Հայաստանից տարած գանազան իրերով:

Անիին մենք պատմել ենք, որ ինքը կրում է հայոց հինավուրց մայրաքաղաքներից մեկի անունը, որն ավերել ու զավթել են թուրքերը: Մենք նրան պատգամել ենք հեռավոր Բերգամոյից հայացքը մշտապես ուղղել դեպի նախնիների երկիր՝ Մայր Հայաստան, դեպի Կիլիկիա ու Լիբանան և հիշել, որ յուրաքանչյուր հայի սրբագույն պարտքն է սերունդներին նախնիներից ժառանգած ազգային արժեքների փոխանցումը:

– Շնորհակալ ենք, պարոն Պեգիբյան, Ձեր ողջ կյանքով ու գործունեությամբ Դուք լավագույն օրինակ եք մեր երիտասարդ սերնդի համար: Ի՞նչ կմտածեք այն բոլոր հայորդիներին, ովքեր նոր են կյանք մտնում:

– Ես նույնպես շնորհակալ եմ ՀՀ սփյուռքի նախարարությանը և նախարար Հրանտի Հակոբյանին իմ կյանքն ու գործը գնահատելու համար: Անկեղծ ասած չգիտեի, թե պիտի արժանանամ նախարարության Ոսկե մեդալին: Այդ պարգևը և՛ ոգևորիչ է, և՛ պարտավորեցնող:

Բոլոր հայ ծնողներին խորհուրդ կտամ առանց ավստասանքի սերմեր ցանել, որովհետև այդ սերմերի պտուղները վաղն իրենց զավակներն են քաղելու: Իսկ լավագույն սերմը գիտելիքն է, որ ցանկացած շրջահայաց հայ ծնող պետք է տա իր զավակին: Մեր 9-ամյա թոռնուհին այսօր արդեն տիրապետում է 3 լեզվի:

Հայ երիտասարդներին մաղթում եմ աշխատասիրություն և անկոտրում կամք՝ մեր Հայրենիքի բարգավաճման ու զարգացման դժվարին ճանապարհը պատվով կերտելու համար: Մենք կարող ենք ստեղծել կայացած ու զարգացող Հայրենիք, եթե ունենանք հզոր Սփյուռք և հզոր Հայաստան:

Հարգազարույցը վարեց Լիլիթ ԴԱՄԻՐՅԱՆԸ

Ողբանով ենք ճանաչում ու պահպանում ավանդական ու ազգային տոները.

հարցազրույց «Տոնացույց» բարեգործական հասարակական կազմակերպության հիմնադիր և նախագահ Հասմիկ ԲԱՂՄՍՅԱՆԻ հետ



Մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը հավաստում է, որ «տոնը» բնիկ հայերեն բառ է և նշանակում է հասարակական հանդես, հանդիսավոր օր: Հեռավոր անցյալում տոն է կոչվել աստվածներին մատուցած զոհը, զոհաբերվող կենդանին, որևէ հանդիսության նվիրված խնջույքը: Ժամանակների հետ տոնի իմաստը սեղմվել է, կայունացել և ստացել նշանավոր դեպքի կամ իրադարձության առիթով տեղի ունեցող հանդիսություն կամ հանդիսավոր օր իմաստը: Ազգային են կոչվում վաղնջական ժամանակներում ծնունդ առած տոները: Օրինակ, մի քանի հազար տարվա հնություն ունեն Նավասարդյան տոները, որ հայ ժողովուրդը հանդիսավորապես նշում էր Բագրևանդ գավառում, Արածանի գետի ափին: Այն նաև պետական տոն էր, որովհետև հայոց պետությունը հոգ էր տանում, որ այդ տոնը նշվի պատշաճ մակարդակով, նրան մասնակցում էին թագավորն ու թագուհին, արքունի գործը, նախարարները, հայոց մեծամեծները: Պատմության քառուղիներում հայ ժողովուրդը պահպանել է ազգային, պետական ու եկեղեցական մի շարք տոներ: Որոշ տոներ էլ մոռացության են մատնվել: Հայկական տոներին հատուկ են մեծ բազմությունների հավաքները, մրցախաղերը, ձիարշափները, երգն ու պարը, ամուսնքը, փոխադարձ նվիրատվությունները, ձոխ ճաշկերույթները: Դրանցում արտացոլվում են ազգային նկարագիրը, հայկական ոգուն բնորոշ դրսևորումները: Պետական տոները հիմնականում արտահայտում են երկրի և ժողովրդի համար պատմական պահերը:

Հայոց ազգային սովորույթներից է ընտանիքի անդամների ծննդյան, ամուսնության տարելիցները, նրանց կյանքում տեղի ունեցած մյուս կարևոր իրադարձությունները հանդիսավորապես նշելը: Հարազատների մասնակցությամբ անցկացվող ընտանեկան այդ տոնակատարությունները նպաստում են ընտանիքի ամրապնդմանը, տոհմական ավանդույթների պահպանմանը, հայրենի հողի հանդեպ սերն անշեղ պահելուն: Հայոց պետական անկախության ներկա ժամանակաշրջանում բոլոր հնարավորություններն ստեղծվել են ընտանեկան այդ հանդիսությունների շարքում ներառել նաև ազգային, պետական ու եկեղեցական տոները, որոնք խորհրդանշում են մեր ազգային համերաշխությունը, մեր միասնական գոյամարտը, հայկական պետական կառույցի հաստատումը, մեր հազարամյա երազանքների իրականացումը: Մակայն բոլոր նշանավոր իրադարձությունները չեն, որ ուրախառիթ են: Կան նաև նահատակների, մարտիրոսների օրեր, մեռելոց օրեր, բոլորովին վերջերս էլ Ազատամարտիկների հիշատակի օրեր: Եկեղեցական կարևոր տոները կոչվում են նաև տաղավար (Մբ Ծունդ, Ջատիկ, Կարդավառ, Համբարձում, Աստվածածին, Խաչվերաց):

Այսօր էլ հայ ավանդական տոները պահպանվում ու վերականգնվում են շնորհիվ «Տոնացույց» բարեգործական հասարակական կազմակերպության, ի դեմս՝ հիմնադիր և նա-

խագահ Հասմիկ Բաղրամյանի: Կազմակերպությունը գտնվում է Արագածոտնի մարզի Բյուրական գյուղում, վայր, որտեղ կան բազմաթիվ պատմական աղբյուրներ, եկեղեցիներ և վերջապես մեր գիտության պարծանքներից Աստղադիտարանը: Կազմակերպությունը ունի 3 պարային խմբակ և գտնվում է Մուրբ Հովհաննես եկեղեցու հարևանությամբ:

Այս առիթով գրուցեցինք «Տոնացույց» բարեգործական հասարակական կազմակերպության հիմնադիր և նախագահ Հասմիկ Բաղրամյանի հետ:

– Տարիների հեռուից գնահատելով Ձեր անցած ճանապարհը... մի քանի խոսքով պատմեք ձեր մասին:

– Ես Հասմիկ Բաղրամյան – Ավոյանն եմ: 1980-1988 թթ. սովորել եմ Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում, 1980-1990 թթ. Լիսիցյանի անվան միջնակարգ դպրոցում, 1988-1990 թթ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, 1990-1994 թթ. Երևանի պետական Գոնսերվատորիայում, 1992-1994 թթ. նվագել եմ «Սերենադ» կամերային նվագախմբում, 1994-1995 թթ. մենահամերգներով հանդես եմ եկել Ֆրանսիայում և Իտալիայում ծրագրում հայ և եվրոպական միջնադարյան երաժշտություն թավջութակ և երգեհոն (Աննա Բակուցի հետ), 1995-1998 թթ. աշխատել եմ Կատիկյանի թանգարանում Միքելանջելոյի և Պինտուրիկկիոյի սրահներում, որպես թավջութակահարուհի, 1994-1998 թթ. սովորել եմ «Սանտա Չեչիլիա» երաժշտական ակադեմիայում (հնագույն երաժշտության բաժնում), 1998 թ. -ից «Տոնացույց» կազմակերպության ղեկավար, 2009 թ. -ից «Ավանդական տոների վերածնունդ» ՀԿ-ի նախագահ: Կարծում եմ, որ այն շատ լուսավոր է և որոշակի... այն շարունակական ճանապարհ է դեպի Արև:

– Ինչպե՞ս կներկայացնեք այսօրը, որտեղի՞ց ո՞ւր ենք հասել:

– Եթե խոսքը վերաբերվում է մեր ժողովրդին, ապա այսօր մենք փնտրում ենք ուղի դեպի ինքնավարության և ինքնագիտակցության այն բազմամյա մոլորեցնող խճուճքից, որի մեջ մեզ միտուժապարհ կերպով և հետևողականորեն գցել և գցում են: Մա մեծ քաղաքականություն է, որի դեմ պետք է պայքարել և դիմադրել: Ինձ թվում է, որ մենք այսօր եկել ենք այդ գիտակցությանը:

– Ինչպե՞ս կընտրվեք «Ազգային տոներ» երևույթը:

– «Ազգային տոներ» դա հենց այդ հազարամյակներով մշակված, գենետիկ բանաձևի վերածված մաքուր կենսաբար ակունքն է, որից պիտի մենք բոլորս սնվենք և թույլ չտանք որ այն էլ պղտորեն:

– Ողբանով ենք մենք ու ներկայիս սերունդը ճանաչում մեր ազգային տոներն ու ի՞նչ աշխատանք եք տանում դրանց պահպանման ուղղությամբ:

– Կարծում եմ, մենք լավ չենք ճանաչում մեր տոները, դրանց իմաստն ու խորհուրդը, դրանց կապն ու ներդաշնակությունը բնության հետ: Այդ պատճառով չենք էլ գգում տոների կարևորությունը մեր կյանքում: Վերցնենք հենց մեր ամենապիղծ տոներից մեկը՝ Նոր Տարին: Մենք ազգովի նշում ենք այն՝ ամբողջությամբ խախտելով ավանդական բոլոր սովորույթները:

Մեր «Տոնացույց» կազմակերպությունը այդ ուղղությամբ սկսել է իր աշխատանքը 1998 թվից: Արդեն 17 տարի է մենք կազմակերպում ենք մեր ժողովրդական տոները: Սկզբից կազմակերպում էինք Երևանում և ակնհայտ էր մեր քաղաքացիները «տվր» ավանդական տոների հանդեպ, բայց շուտով տեղափոխվեցինք Արագածոտնի մարզ, քանի որ ֆոլկլորը գյուղական միջավայրում ավելի բնական է ներկայանում՝ այնտեղ է իրական մաքուր ակունքը: 2006 թվականին ստեղծեցինք «Տոնացույց» ժողովրդական թատրոնը, որը մասնագիտացավ հնագույն տոների և ծեսերի ներկայացումների վրա և բեմականացումները իրականացրեց Աշտարակի Պ. Պռոշյանի տուն-թանգարանում: Իսկ 2008-ին բացվեց «Ավանդական տոների վերականգնման և փոխանցման դպրոցների» ցանցը, որը սկզբնական շրջանում հովանավորվեց ՀՀ մշակույթի նախարարության կողմից: Դպրոցներ բացեցինք Աշտարակում, Օշական, Ագարակ և Բյուրական գյու-



ղերում: Ներկայումս դպրոցը գործում է Բյուրականում: Մենք ընտրեցինք այս գյուղը իր բացառիկ աշխարհագրական դիրքի և հարուստ պատմա-մշակութային ժառանգության համար: Հենց այստեղ էլ այս տարի հիմնեցինք «Տոնացույց» կենտրոնն ու ավանդական տոների թանգարանը: Այսպիսով բնական միջավայրում կազմակերպում ենք ուսուցողական ծրագրեր և համերգային միջոցառումներ:

Ասեմ նաև, որ 2010 թվականից մեր «Տոնացույց» խումբը պարբերաբար ելույթ է ունենում Եվրոպայում անցկացվող միջազգային ֆոլկ փառատոններում, ներկայացնելով մեր ժողովրդական երգերը, պարերը և իհարկե տոնական ավանդույթները:

Բացի այս ամենից, 2011 թվականից կազմակերպում ենք առաջին անգամ Հայաստանում ամենամյա միջազգային ֆոլկլորային փառատոն «Հայաստանը Խաղաղության Խաչմերուկում»: Փառատոնի շրջանակներում Հայաստան ենք բերել Իտալիայից Չիոչիարիայի «Վալլե դի Կոմինո» և Սարդինյայի «Մամուգետ» ֆոլկլորային խմբերը, Լեհաստանից «Վիելկեպոլանիա» և «Շամատուի» ֆոլկլորային խմբերը, ինչպես նաև Չեխիայի «Վալաշկե Կոյովոդու» և Լիտվայի «Ռատիլիո» ֆոլկլորային խմբերը, որոնք մեր հայաստանյան խմբերի հետ միասին մեկ շաբաթ ելույթ են ունենում հանրապետության տարբեր քաղաքներում և գյուղերում, և իհարկե Երևանում: Այս տարի փառատոնը տեղի կունենա սեպտեմբերի 9-14-ը:

- Ինչի՞ վրա է բևեռված մեր հասարակությունը:
- Այն ամենի, ինչի վրա որ «բևեռում» են ՁԼՄ-ները:

- Ի՞նչ որակ է ձևավորում արվեստը:
- Համապատասխան ճաշակ և աշխարհահայացք: Հաճախ մենք չենք տարբերում մշակույթը արվեստից: Մշակույթը դա հազարամյակների ընթացքում ժողովրդի կողմից մշակված և հստակ ձևաչափի մեջ ներկայացվող հավատալիք է, որը վերածվում է ազգի կենսակերպի: Այն ամենը, ինչ դուրս է այդ բանաձևից, մշակույթ չէ: Արվեստը մարդու ստեղծագործություն է, այն ազատ է իր դրսևորումների մեջ: Որակն էլ ձևավորում է արվեստի ուղղությունը, թե որն էս գերադասում ջազը, դասական երաժշտությունը, պարարվեստը... օրինակ, մեկը սիրում է Վազ-

ների երաժշտությունը, մյուսը Արա Գևորգյանի՝ դրանք կարծում են շատ տարբեր մարդիկ են:

- Ի՞նչը կարող է միավորել ազգային տոները:
- Իմ կարծիքով բնապաշտանունները:

- Ի՞նչն է տարանջատում ազգային տոները:
- Անիմաստությունը:

- Ձեր կարծիքով ինչպիսի՞ կարգավիճակում են գտնվում մեր երկրի ազգային տոները:
- Անհասկանալի և բացիթողի:

- Ո՞րն է ազգային տոների նշանակությունն ու տեղը մեր հասարակության մեջ:

- Կարող է հիմնա շատ տարօրինակ բան ասել, բայց իմ տարիներին փորձը ցույց է տալիս, որ ազգային տոնը ավելի անհատական երևույթ է, քան հասարակական: Այն իսկապես «Խորհուրդ է, մեծ և սքանչելի», որն ամեն մեկը իր մեջ պիտի բացահայտի: Ազգային տոնը բերում է կատարյալ ներդաշնակության, որն օղի ու ջրի պես անհրաժեշտ է մարդուն: Եկեք տարբերենք տոնն ու սովորույթները: Սովորույթները մենք անում ենք անգիտակցաբար, օրինակ հազարամյակներ շարունակ Վարդավառին իրար վրա ջուր ենք լցնում, կամ Տրնդեզին թոնում ենք կրակի վրայից, կամ էլ Ջատկին կարմիր ձու ենք ներկում և այլն: Իսկ տոնը բխում է ներքուստ, այն գիտակցված է, իմաստավորված և սպասված: Ոչ միայն մեզ մոտ, այլ ընդհանրապես մասսայական տոները օգտագործվում են հասարակությանը կառավարելի դարձնելու նպատակով: Իսկ գիտակցված ազգային տոնը ձևավորում է ազատ հայրենասեր և աստվածասեր անհատի:

- Կա՞ մի բան, որ ասել չեք կարող:

- Ոչ թե չեմ կարող, այլ չեմ ուզում - մեր քաղաքական դաշտն է, և ընդհանրապես քաղաքականությունը:

- Ձեր խրատը այսօրվա հուսալի երիտասարդներին ու պատմաբաններին...

- Եղեք հայրենիքի և բնության սիրահար ու նվիրյալ:
Գարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ապրելու բանաձև

ՄՊԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ



Կան անհատներ, որոնք իրենց նկարագրի հետ մեկտեղ իրենց մեջ խտացնում են մարդկային վեհ հատկանիշներ: Էությունը, վարք ու բարքով, ճշմարիտ մտավորականի սիրելի գործին տքնաջան նվիրումի, աշխատանքից չխուսափելու ու պաշտամունքի հասնող նվիրական վերաբերմունքով հավատարիմ են մնում իրենց կոչմանը: Ֆինանսական գործի մասնագետ, բայց հոգեկերտվածքով մտավորական, գրի ու գրականության անխոնջ ծառա Մայրտակ Մաթոսյանը ստեղծագործական խորհրդավոր աշխարհ մուտք է գործել աներկյուղ, վայրկյան անգամ չերկմտելով: Կայացել է իբրև իր ձեռագիրն ունեցող ստեղծագործող, ժամանակը և մարդկանց ներկայացնելու ինքնատիպությամբ: Մայրտակ Մաթոսյանի ապրումները սպիտակ թղթի վրա դառնում են փաստագրական տողեր հայրենասերների մասին (Մայրտակ Մաթոսյանը քաջ զինակցում է, որ ժամանակներն են ժամանակներին փոխանցում տարեգրություն՝ պահ տալով անցնող ժամանակի շնչառությունը), ավանդազրույցներ, տողեր՝ ծնված բանաստեղծական ներշնչանքից:

Հոգեկիրը (Շուշի)

Շուշիից դեպի Ստեփանակերտ արձակված արկերն էր հաշվում Տիգրանը: Հաշվում էր ամեն օր, առավոտ ու իրիկուն, գիշեր ու ցերեկ:

– Որքա՞ն է շարունակվելու...
Դարավոր քաղաք-ամրոցը հավերժությունը գրկած իշխում էր իր բարձրունքից: Իսկ այդ բարձրունքից Ստեփանակերտը կարծես բռի մեջ էր:
– Մի քանի ամիս առաջ ինչ-որ ծրագրեր էին մշակում: Ի՞նչ եղավ: Ե՞րբ է...
Տիգրանը ողջ էությունը այնպես էր սուզվել մղձավանջի մեջ, որ ինքն էլ չէր հասկանում քնա ծ է, թե՛ արթուն: Աչքերը փակվում էին անուշ նիհովի, իսկ միտքը... Միտքը հառել էր Շուշվա բարձունքին: Միտքը պանում էր փառահեղ քաղաքի երբեմնի ծաղկուն փողոցներով, հասնում վեհաշուք Սուրբ Ղազանչեցոց եկեղեցի:
–...284, 285, 286... Գիշերվա խավարին էլ չեն դադարում անիծյալները: Ե՞րբ է վերջանալու:
Գիշերը նոր էր կիսվել: Ջինվորների շշուկներն ավելի էին քչացել ու մեղմել, դարձել խորհրդավոր:

Տիգրանը կիսաբաց աչքերը դարձյալ ուղղեց դեպի վեր: Թանձր ամպերից այն կողմ թաքնված էր կապտավուն երկնքի անսահմանությունը:
...Ակնթարթային լույս ճառագեց հանկարծ՝ արեգակից էլ պայծառ: Երկնքի ծայտյալ խավարի մեջից ամրակուռ մի քաջալերանք, ոգեղեն, աննյութ մի ոգևորություն մխրճվեց Տիգրանի սրտի ու հոգու դարպասներից ներս: Կարծես ծանրացավ հոգու աննյութեղեն մարմինը: Աներևույթ հոգեկիրը մանկան քնքշությամբ պաշարեց նրան: Նույն պահին.
– Ի՞նչ մա՞րտ... սկսում ենք: Սկսում ենք... – շշուկներով իրար էին հաջորդում Սևանի ջուկատի ազատամարտիկները:
Տիգրանն սթափվեց վայրկյենաբար: Նա գգում էր, որ իրեն հետամուտ է աննյութեղեն հոգեկիրը, աներևույթ մանուկը: Ուղղորդում էր քայլ առ քայլ:
Բարձունքից լավեցին թշնամու կրակահերթերն ու միանգամից սաստկացան: Մակայն ջուկատն առաջ էր ընթանում: Շարժվում էր՝ զանդիթափ քարածայրերը մագլցելով, ջանալով աննկատ մտալ լուսարձակների փնտրող լույսերից, որոնք հաճախ լուսավորում էին

լերկ ժայռերը, իսկ թշնամու գնդակները նույն պահին կարծես կարկտահարում էին ջուկատը:
Գրոհող ազատամարտիկների էություն մեջ կարծես մխրճվել էր հոգեկիրն ու գնդակների տարափին դիմակայելով, ուղղորդում էր անառիկ քաղաք:
–...Պահվի՛ր ժայռի ետևում... Հիմա գնդակով ելու ես, Տիգրան, պառկի՛ր...
Թշնամու գնդակները մահաբեր սուլոցներով անցնում էին հավելով, արկերը պայթյուն՝ ցնցելով հինավուրց ժայռերի հավերժական անդորրը:
Խավարի մեջ պայթած մի արկի լուսարձակումից տեսանելի է դառնում ողջ տեղանքը:
– Մամվելին կպա՛վ, – գոռաց Տիգրանն ու փորձեց վազել դեպի հրամանատարը:
– Կանգնի՛ր, գգու յ՛, գնդակոծո՛ւմ են: Թեքվիր ճա՛խ... Վերադարձի՛ր, Մամվելին գնդակ չի կպել, ե՛տ արի: Արի՛, գնում ենք առաջ: Դեպի Սկիզբ ենք գնում...
– Առաջ, թուրքերը փախչո՞ւմ են, – գոռացին ջուկատի տղաները:
Ազատամարտիկների սրտերը պայթում էին ոգևորությունից: Հեռուստաաշտարակի մոտից սաստիկ կրակահերթեր էին լսվում, շրջակայքը ծխում էր: Մարտիկները հասկանում էին, որ մերոնք թշնամուց մաքրում են քաղաքի ծայրամասերը:
– Տղե՛րք, թուրքերը փախչում են...
Շուշիի հարավային դարպասներից ջուկատն անցավ հարձակման դեռևս դիմադրող թշնամու ուղղությամբ: Մակավաթիվ ազերիներն, ամեն ինչ նետելով, գլուխները մի կերպ ազատում ու խուճապահար փախչում էին:
– Թուրքերը փախչում են...
– Տղե՛րք, Սուրբ Ամենափրկիչը... Ղազանչեցոց եկեղեցի ն...
Շուշիի Մարիամաց Օրիորդաց դպրոցից

ԱՎԱՆԴԱՉՐՈՒՅՑՆԵՐ
Գելահաջ
(ավանդազրույց)
Չայնո գյուղում թափառող շուն էր: Գիշերները մեկ էլ տեսար՝ սկսում էր հաչել: Ահի՛ց էր, արոյոք, թե՛ սովորություն էր դարձել, ոչ ոք չգիտեր:
Մի մույթ ու խավար գիշեր, սովը հաղթել էր վախին, ու գայլը գյուղ էր մտել: Գայլին առաջինը Չայնո նկատեց ու սկսեց գելահաչ տալ:
Գյուղի մյուս ծայրին Չամբար շան ականջին հասավ Չայլոյի գելահաչն ու նա, Չայլոյից ավելի զիլ ու գագազած, սկսեց գելահաչ տալ...
...Թեպետ Չամբարը չէր էլ տեսել, որ, իրոք գայլ էր մտել գյուղը...

230

մինչև եկեղեցի վազում էին հեռու: Թուրքերն Ամենափրկիչը ռազմական պահեստի էին վերափոխել: Եկեղեցու շուրջը կուտակված արկերի արկղերն այս ու այն կողմ նետելով ջոկատը ճանապարհ էր բացում ու ներս մտնում:

- Շուշին ազատագրված է... մումե՛ր... մումե՛ր բերեք...
Տիգրանը վառեց մումը: Մում վառեցին բոլորը: Մրտերը լցվել էին հաղթության բոցավառ կրակներով:
- Մումե՛ր, մումե՛ր...
Ու հաղթանակի երգեր, պարեր, շուրջպարեր...
Տիգրանն արտասովոր էր: Հրճվանքից: Ուրախության լուսափայլ արցունքներն ընկնում էին գետնին ու... Շլարձակում էին գարնան

պայծառակերպությունն ավետող Ձնձաղիկները, Համբարձույթները, Նարգիզները...

Հանկարծ զարմանալի մի թեթևություն զգաց Տիգրանը: Անբնական հանգստություն զգաց ուսերին, ողջ մարմնում: Մրտի ու հոգու մեջ իջնում էր հանդարտ մի խաղաղություն: Ոտքերն էին միայն ծանրացել: Ծանրացել է... Ո՛չ, ո՛չ: Հզորացել էին: Պինդ հողը հազիվ էր դիվանում ոտքերի տակ:

- Ու՛ր գնաց ՆԱ...
Մանկան տեսիլով, աներևակ հոգեկիրն Աստծո տանը խնկարկոտ աղոթքների հետ համբարձվել էր առ Աստված...
Նա դեռ էլի էր գալու...

Սպարոսյակ ՄԱԹՈՍՅԱՆ
Էջը պատրաստեց Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Մեր երիտասարդ արվեստագետները

Արվեստը սեր է, իսկ սիրուն բոլոր տարիքներն են հպատակ

Նկատել, զգալ կյանքը... տրվել կյանքին...

Արման Քոչարյան, գեղանկարիչ, ով ապրում է իր ինքնատիպ ու նրբին աշխարհում, ինքն ու իր աշխարհը իր գունային վիճակների արտահայտություններով, գեղեցիկի հավերժական զգացումով:

Երիտասարդ արվեստագետը քսանինգ տարեկան է, բայց արդեն ձևավորված է որպես արվեստի խոնարհ ծառա, նկարիչ, սեփական «տեսողությամբ» ու կամոք Աստծո ճանաչում է Արվեստը տանող կաճանները, դե իսկ ամեն մի կաճան միշտ էլ տանում է դեպի մեծ ճանապարհ:

Ու այդ ճանապարհին գեղանկարիչը գեղեցիկն ու կյանքը տեսնում է արվեստի լույսով, գեղագիտական իր բարձունքից, կյանքից վերցնելով գեղեցիկ նշաններ դրանք ներկայացնում է իր անձնական



ապրումներին՝ իր ներկերին հաղորդելով սեփական գունային քնարերգությունն ու հուզականությունը:

Ոգեշնչման աղբյուրն էլ համարում է պահի



տպալորությունը, բազմապիսի զգացողությունները, որոնց ազդեցության տակ էլ իր հոգին մտնեցնում կտավին:


- *Եթե նկարիչը չի օգտվում գույների ընկալման ազատությունից, դրանով նա իրեն զրկում է ամենակարևորից՝ ուրախությունից:*

Մարտիրոս Մարյանի այս խոսքերը մեծ վարպետի արվեստի բանալին են:

Արմանն էլ է գտել իր բանալին: Ձեռքն առնելով վրձինը՝ իր ինքնատիպ ձեռագրով, գեղարվեստական ընկալումների, կերպավորման ու արտահայտչամիջոցների սեփական հայեցակարգով ի գործ է ջերմացնել մարդկանց սրտերը, տաք գույներով ցրել հոգու թափսիծը, գարուն բացել բոլորի սրտերում:

Նկարիչը, ում համար նկարել նշանակում





240

է ապրել, զգալ, տենչալ, ձուլվել սեփական «Ես»-ին, ինքն է իր համար սահմանում նկարելու իր օրենքները և ենթարկվում դրանց։ Եվ վրձներգերի աշխարհում ձգտում է ստեղծել զունային սեփական հեքիաթը, ապրել իր ուրույն ոգեղեն կյանքով։ Նրա գործերում գիծը, գույնը, երանգը չեն ճշում, չեն «աղմկում», այլ հանդարտ սահում

են կտավի մակերեսին, դիտողին ստիպում ընկղմվել ներքին լույսով հագեցած հարուստ մի աշխարհ։ Գծանկարի ձևի մեջ էլ երևում է նրան բնորոշ սկզբունքները՝ ձգտել ու ներկայացնել կերպարի ամենաբնորոշ գծերը։
 – Մեկնադրկային ծիրում գտնվող Արմանի համար ի նչ է նկարելը։
 – Զգալ կյանքը և ... տրվել կյանքին։

Ուրվագծված են երիտասարդ գեղանկարչի նվիրումն ու աշխարհին նայող սեփական գեղագիտակը։ Եվ թող էլ ավելի մեծանան նրա արվեստի սահմաններն ու ժամանակը։ Երթի շարունակությունը լինի էլ ավելի շոյալ ու արգասավոր։

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

40 տարվա ծանրությունը

Մի մարդ շուկայում կարտոֆիլ է գնում։ Տուն վերադառնալով՝ նա բացահայտում է, որ կարտոֆիլի փոխարեն առևտրականները նրա պարկի մեջ քարեր էին լցրել, և միայն վերևի մասն էր կարտոֆիլով լցված։

Դեպքը թեև զայրացնող էր, սակայն նա հետ չի վերադառնում և մոռանալով այդ տհաճ պատմությունը՝ շարունակում է ապրել իր առօրյա կյանքով։

Եվ ահա 40 տարի անց նրա դուռը թակում են։ Երբ նա դուռը բացում է, տեսնում է շեմին կանգնած երկու հայուհաշ ծերերի։

– Բարև, – ասում են նրանք, – այդ մենք ենք խարել քեզ 40 տարի առաջ և հիմա եկել ենք խնդրելու, որ ներես մեզ։

– Ես հիշում եմ այդ դեպքը, – հանգիստ պատասխանում է մարդը, – բայց դուք ոչինչ ինձ պարտք չեք։ Մյն քարերը ես թափեցի հենց նույն օրն ու ազատվեցի



դրանցից։ Բայց դուք, ինչպես տեսնում եմ, 40 տարի շարունակ դրանք պահել եք ձեր սրտերի մեջ։ Ուրախ եմ, որ այսօր դուք ևս ազատագրվեցիք այդ քարերից։

Ֆ. Գ. Միբելի ընթերցող, գուցե դու էլ տարիներ շարունակ ինչ-որ «քարեր» ես պահում քո սրտում։ Ժամանակը չէ՛ արդյոք ազատվելու դրանցից...

Մի անգամ զագանները վիճում էին, թե ով է ամենաուժեղը առյուծից հետո։ Գայլն ասում էր. «Ես եմ ամենաուժեղը առյուծից հետո»։ Արջը չէր համաձայնում. «Ոչ, ամենաուժեղը ես եմ»։ Բնասնալով այս մասին առյուծը ժողով հրավիրեց ու բոլորի ներկայությամբ հայտարարեց. «Ինձանից հետո ամենաուժեղ զագանը նապաստակն է»։ Նապաստակը, ոգևորված առյուծի հայտարարությունից, գնաց ու մի փոքր վախվիսելով կծեց գայլի պոչը, որպեսզի տեսներ, թե ինչ է կատարվելու։ Գայլը շրջվեց ու ինչ տեսնի. իրեն կծողն ամենաուժեղ զագանն էր առյուծից հետո։ Մուսուփուս ներողություն խնդրեց նապաստակից ու մի կողմ քաշվեց։ Նապաստակի համարձակությունը կրկնապատկվեց։ Գնաց ու այս անգամ էլ կծեց արջին։ Արջը վարվեց նույն կերպ ինչպես որ գայլը։ Նապաստակը վազելով հասավ վագրի մոտ ու նրան նույնպես կծեց։ Վագրը շոտ եկավ, թաթով խփեց ու սպանեց նապաստակին։ Պարզվեց, որ նա ներկա չէր եղել ժողովին ու չգիտեր, որ նապաստակն ամենաուժեղ զագանն էր առյուծից հետո։

Մմբատ սարկավազ ԽԱՆՎԵԼՅԱՆ

Մի անգամ Սոկրատեսն ասաց. «Ըստ իս, տարօրինակ կլինեք, եթե մարդը, ով նախրի հովիվ է դարձել և կրճատել է կովերի քանակն ու որակը, իրեն չհամարեր վատ հովիվ։ Բայց շատ ավելի տարօրինակ է, երբ պետության կառավարիչ դարձած մարդը՝ կրճատելով քաղաքացիների քանակն ու որակը, չի ամաչում դրա համար և իրեն չի համարում պետության վատ ղեկավար»։

ԸՍԵՆՈՖՈՆ

Մարդն ամեն ինչ հակառակն է անում. շտապում է մեծանալ, իսկ հետո երագում մանկություն վերադառնալու մասին։ Կորցնում է առողջությունը համուրի փողի, իսկ հետո ծախսում է այդ փողը առողջությունը վերականգնելու համար։ Այնքան անհամբերությամբ է մտածում ասպագայի համար, որ մոռանում է ներկան՝ չունենալով ո՛չ ներկա, ո՛չ ասպագա։ Ապրում է այնպես, կարծես չի մեռնելու, և մեռնում է այնպես, կարծես երբեք չի ապրել...

Պատկը ԿՈՆԵԼԻՈ

Զնարավոր չէ օգնել նրան, ով իր կյանքը փոխելու ցանկություն չունի։

ՀԻՊՈԿՐՈՍ

Երկու մարդ կա, որ կարող է քո մասին ճշմարտություն ասել՝ ինքնաստիքապետունը կորցրած թշնամիդ և քեզ անկեղծորեն սիրող բարեկամը...

Անյիսթենես ԱԹԵՆԱՅԻ

ԼԵՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԶԳԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Լեհաստանում, ինչպես հայտնի է, 14-րդ դարից ի վեր բնակվել են մեծ թվով հայեր, որոնց լեհական իշխանությունները շնորհիվ են իրավունքներ և արտոնություններ: Դրանց շնորհիվ հայերը կարողացել են ոչ միայն գոյատևել, այլև գործուն մասնակցություն ունենալ այդ երկրի քաղաքական, տնտեսական, ինչպես նաև մշակութային կյանքին և դրանով իսկ խոշոր դերակատարում ունենալ¹:

Լեհ արքաները, նկատի ունենալով հայերի ընդունակությունները և բարեխղճությունը, հաճախ նրանց դիվանագիտական պատասխանատու պաշտոններ են վստահել: Առանձնապես ուշագրավ է այն էջը, որ հայերը գրել են Արևելքում լեհական դիվանագիտական ծառայության պատմության մեջ:

Լեհաստանում բնակվող հայերը լավ են տիրապետել արևելյան, մասնավորապես՝ թուրքերեն և պարսկերեն լեզուներին: Նրանք լավ են իմացել թուրքերեն և Իրանի կենցաղը, բարբերը, ծանոթ են եղել այդ երկրների տնտեսությանը և գործնական լայն կապեր են ունեցել այնտեղ:

Միա հաշվի առնելով այդ հանգամանքը, լեհական կառավարությունը դիվանագիտական պատասխանատու և վտանգավոր առաքելությունները դեպի Արևելքի երկրներ հանձնարարել է բացառապես հայերին: Որպես ընդունված կարգ, Արևելք մեկնող մնալ պատվիրակությունները գլխավորում էին լեհ մագնատները, սակայն սովորաբար նրանց մշտապես ուղեկցում էր հայազգի պաշտոնական թարգմանիչը²: Լեհական իշխանությունների կողմից հայերի այդպիսի պատասխանատու առաքելություններ վստահելու գործում մեծ նշանակություն ուներ ոչ միայն վերջիններիս լեզվական ունակությունները, այլև այն հանգամանքը, որ լեհերը համոզված էին, որ հայերը նմիված են իրենց երկրին, որտեղ նրանք բնակվում են: Լեհահայերն իրենց հերթին նույնպես ձգտում էին պատվով կատարել դիվանագիտական ծառայությունը, որն ըստ էության նրանց բերում էր արտոնություններ, մեծաշնորհներ, ընդհուպ մինչև ազնվականի տիտղոսը:

Սկսած 14-րդ դարից Լեհաստանում քաղաքային շուկայի թարգմանչի պաշտոնը համարվում էր դիվանագիտական կարևոր պաշտոն, որը նույնպես հայերն էին զբաղեցնում³: Քաղաքի շուկայում արևելյան լեզուներ իմացող մի քանի թարգմանիչ ունենալու անհրաժեշտությունը պայմանավորում էր լեհական պետության Արևելքի երկրների հետ ունեցած առևտրական հարաբերությունների ընդլայնումը: Կենտրոնական Եվրոպայի և Արևելքի միջև ապրանքափոխանակությունը կատարվում էր Լեհաստանի խոշոր քաղաքների վրայով: Թուրքիայի և Իրանի տարբեր քաղաքներից այդտեղ էին գալիս բազմաթիվ վաճառականներ, որոնք չգիտեին լեհերեն: Այդ գործում էլ լեհական իշխանություններին դարձյալ օգնության էին գալիս հայերը⁴: Քաղաքային շուկայի թարգմանչի պարտականությունն էր ոչ միայն հսկել առևտրի նորմերի պահպանումն ու տոնավաճառի կանոնները, այլև

աջակցորեն հետևել, որպեսզի վաճառականի դիմակի ներքո թաքնված որևէ օտարերկրյա գործակալ մուտք չգործեր Լեհաստան:

Պահպանվել է մի հետաքրքիր վավերագիր, որի շնորհիվ կարելի է պատկերացում կազմել քաղաքի թարգմանչի պարտականությունների մասին: Դա Լվով քաղաքի իշխանությունների ու հայազգի Միկոլայ Բայդալովիչի միջև 1657 թ. կնքված պայմանագիրն է: Ըստ այդ պայմանագրի թարգմանիչը պարտավոր է ճանաչել քաղաք ժամանած օտարերկրյա բոլոր վաճառականներին, հայտնաբերել գործակալներին և նրանց մասին հայտնել քաղաքի իշխանություններին: Լվով ժամանող և այնտեղից մեկնող բոլոր արևելյան վաճառականները պետք է ներկայանային գլխավոր թարգմանչին:

Միկոլայ Բայդալովիչը վայելում էր լեհական իշխանությունների մեծ վստահությունը և հարգանքը⁵: 1667 թ. նա արքայական հետման Իերոնիմ Ռադզեևսկու գլխավորած պատվիրակության հետ որպես թարգմանիչ մեկնում է Օսմանյան կայսրություն և հաջողությամբ կատարում իրեն հանձնարարված առաքելությունը: Դրա համար լեհական թագավորը նրան ցմահ նշանակում է թարգմանիչ և շնորհում ազնվականի տիտղոս⁶:

Պետք է նշել, որ 16-րդ դարից սկսած լեհահայերին վստահում էին ոչ միայն թարգմանիչների, այլև պրիստավների, արքայական գրասենյակի քարտուղարների, պաշտոնական թարգմանիչների, սուրհանդակների, դեսպանորդների և նույնիսկ դեսպանների պարտականություններ⁷:

Հայերը հատկապես վառ էջ են գրել Արևելքում լեհական դիվանագիտական ծառայության պատմության մեջ 17-րդ դարում, երբ Լեհաստանի գրեթե ողջ արևելյան առևտուրը գտնվում էր հայերի ձեռքին⁸ և երբ առանձնապես աշխուժացան Լեհաստանի կապերը Սերծավոր Արևելքի երկրների հետ:

Ուշագրավ դեպք է եղել Սեֆեր Մուրատովիչը: Նա վարչակազմի հայազգի վաճառական, պալատական ազնվական Սևերինի որդին էր: Սեֆեր Մուրատովիչի գործադրած ջանքերի շնորհիվ 17-րդ դարի սկզբին անմիջական կապեր են ստեղծվում Լեհաստանի և Իրանի միջև⁹: 1602 թ. Ռեչ Պոսպոլիտայի (Լեհ-լիտվական միացյալ պետություն) գահակալ Սիգիզմունդ III Վազան (1587 – 1632) նրան արևելյան ապրանքներ գնելու պատվակով ուղարկում է Իրան: Իր այդ կատարած ուղևորության մասին Մուրատովիչը նկարագրել է «Հաշվետվություն» խորագիրը կրող լեհերեն գրված հուշագրության մեջ, որը հրատարակել է 18-րդ դարի լեհահայ մտավորական Յուզեֆ Էյիֆան Մինասովիչը¹⁰:

Այդ հուշագրության բովանդակությունը վկայում է, որ Մուրատովիչը առևտրական հանձնարարություններից զատ ունեցել է նաև այլ առաջարկանքներ: Իսկ առևտրական ներկայացուցչի նրա դերը թելադրված էր արտաքին քաղաքական նկատառումներով: Բանն այն է, որ պարսից շահ Աբբաս Ի-ը, որը Եվրոպայում դաշնակիցներ

էր փնտրում Թուրքիայի դեմ, 1599 թ. պատվիրակություն է ուղարկում Լեհաստան և Հռոմի Կղեմենտիոս VIII պապի մոտ: Բայց պատվիրակությունը Լեհաստան, Սիգիզմունդ III-ի մոտ չի հասնում: Պատվիրակությանը ճանապարհի չի տալիս ռուսական կառավարությունը, որը ձգտում էր համաձայնության գալ Թուրքիայի հետ ընդդեմ Լեհաստանի: Իրան պատվիրակություն ուղարկելու Հռոմի պապի փորձը ևս հաջողությամբ չի պատկվում: Միա թե ինչու Սիգիզմունդ III-ը որոշում է դիմել քողարկման: Նա վաճառական Սեֆեր Մուրատովիչին ուղարկում է Իրան ձախողման դատապարտված հյուսիսային փոխարեն ընտրելով սովորական հարավային երթուղին:

Ժամանակակիցների վկայությամբ Մուրատովիչը եղել է կիրթ անձնավորություն, տիրապետել է դիվանագիտական վարվելաձևին, գիտեր պարսից արքունիքի բարբերը¹¹: Լավ է կողմնորոշվել նաև քաղաքական իրադրության մեջ: Նա կարողանում է շահին համոզել բարեկամական հարաբերություններ հաստատել լեհական թագավորի հետ: Իր վարվելակերպով, գիտելիքներով, ինչպես նաև շահի հարցումներին տված սպառիչ պատասխաններով Մուրատովիչը կարողանում է շահել Աբբաս Ի-ի համակրանքը և հասնել այն բանին, որ շահը խոստանում է պատվիրակություն ուղարկել Լեհաստան:

Իրանի հետ 17-րդ դարի սկզբին դիվանագիտական հարաբերություններ հաստատելը Լեհաստանի համար, անշուշտ, դյուրին գործ չէր: Այդ ժամանակ Եվրոպայում հասունանում էր հակաթուրքական դաշինք ստեղծելու զարափարը և այդ դաշինքի մեջ Իրանին ներգրավելու խնդիրն ուներ մեծ նշանակություն¹²: Սեֆեր Մուրատովիչի առաքելությունն ըստ էության պատկվում է հաջողությամբ՝ Սիգիզմունդ III-ը նրան շնորհում է Լեհաստանի հայ գաղութների ավագի պաշտոնը, որը վարում է մինչև 1652 թ.:

17-րդ դարի լեհահայ հայտնի դիվանագետներից էր Բետրոս Գրեգորովիչը, որի վերաբերյալ, ցավոք, սակավ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա լայն կապեր է ունեցել ոչ միայն Լեհաստանի, այլև Ավստրիայի, Թուրքիայի և այլ երկրների արքունիքներում: Ջբաղվել է նաև ֆինանսական գործունեությամբ¹³:

Վերոնշյալ ժամանակաշրջանում լեհական դիվանագիտության առավել բարդ ու դժվարին բնագավառը Թուրքիայի հետ ունեցած հարաբերություններն էին, քանի որ Թուրքիայի և նրա վասալների ագրեսիայի սուր ծայրն ուղղված էր Լեհաստանի դեմ¹⁴: 17-րդ դարում լեհ-թուրքական մշտական պատերազմները մեծ ճկունություն էին պահանջում լեհ դիվանագետներից: Հակաթուրքական դաշինք ստեղծելու գործում լեհական իշխանություններն ապավինում էին նաև լեհահայերին, ի դեմս նրանց տեսնելով դաշնակիցների: Եվ Լեհաստանի հայ համայնքներն արդարացում էին այդ հույսերը, դրանով իսկ նպատակ ունենալով առավելապես օգնել հայ ժողովրդի

260

ազատագրական պայքարին: Դրա համար էլ հաճախ Կոստանդնուպոլիս էին ուղարկում հայերի՝ քաղաքական և ռազմական կարևոր առաքելություններ կատարելու կամ Լեհաստանին անհրաժեշտ տեղեկություններ հայթայթելու նպատակով:

Ունեցողությունների գահակալ Սիզիգմունդ III-ի և նրա հետնորդ Վլադիսլավ IV Վազայի (1632 – 1648) հովանավորությունը վայելող հայազգի Սերբերկովիչների ընտանիքից են սերում մի քանի անվանի դիվանագետներ և թարգմանիչներ: Այդ տոհմի աննաակամավոր ներկայացուցիչն է Կրիշտոֆ Սերբերկովիչը¹⁵:

Լեհ-թուրքական 1620 – 1621 թթ. պատերազմը, ինչպես հայտնի է, ավարտվեց 1621 թ. հոկտեմբերի 9-ին Լեհաստանի և Թուրքիայի միջև Խոտինի մոտ կնքած հաշտությանը: Այդ հաշտության պայմանագրի նախնական պայմանները մշակվել էին հենց այդտեղ, իսկ պայմանագիրն ամբողջությամբ թուրքական սուլթանից պետք է բերել լեհական դեսպանն ավելի ուշ: Ահա այդ նպատակով Կոստանդնուպոլիս է ուղարկվում «մեծ» դեսպան լեհ իշխան Կրիշտոֆ Ջբարսկին¹⁶: Սակայն շուտով պարզվում է, որ նրա բերած տեքստում կային բազմաթիվ անձնություններ, ինչպես նաև Լեհաստանին ոչ ձեռնտու կետեր:

Դրանք վերացնելու նպատակով Թուրքիա է ուղարկվում նոր պատվիրակություն, բայց այս անգամ արդեն լեհ իշխանի փոխարեն որպես «կրտսեր դեսպան» ուղարկվում է Կրիշտոֆ Սերբերկովիչը, որը լվովցի հայ էր¹⁷:

Ի դեպ, պետք է նշել, որ Լեհաստանն արևմտաեվրոպական որոշ պետությունների մեծ միջև 18-րդ դարն ուներ դեսպանների երկու աստիճան՝ «մեծ» և «կրտսեր»: Նրանց իրավունքներն ու լիազորությունները նույնն էին, տարբերությունը սույն դեսպանին ցույց տրվող ընդունելությունների ճոխության ու մեծարանքների մեջ էր:

Այսպիսով՝ Կրիշտոֆ Սերբերկովիչին հանձնարարվում է դժվարին և ոչ այնքան հաճելի առաքելություն՝ լեհ-թուրքական պայմանագրի տեքստի փոփոխումը: Մինչ այդ, Սերբերկովիչն իշխան Ջբարսկու հետ Կոստանդնուպոլիս էր մեկնել որպես թարգմանիչ, բազմիցս եղել էր այնտեղ որպես պաշտոնական անձ և ոչ պաշտոնական գործակալ: Շնորհիվ իր խելամուտության ու ճկունության, Կրիշտոֆ Սերբերկովիչին հաջողվում է բերել պայմանագրի նոր տեքստը, որն ընդունել էր լեհական կողմի համար: Նրա գործունեությունը, Լեհաստանին մատուցած ծառայությունները նշվում են լեհական իշխանությունների կողմից¹⁸:

Սերբերկովիչների տան մեկ այլ ներկայացուցիչ՝ Ստեֆան Սերբերկովիչը Սիզիգմունդ III-ի օրոք դիվանագիտական պարտականություններ էր կատարում Բարձրագույն Դռանը, իսկ հետագայում նա դարձավ Վլադիսլավ IV-ի քարտուղարը¹⁹:

Լեհաստանում 17-րդ դարի կեսերին հայտնի դիվանագետ էր հայազգի Ռոմաշկևիչը²⁰, որին բազմիցս ուղարկում են Թուրքիա Լեհաստանին անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու: Տեղեկությունները նա քաղում էր թուրք պաշտոնյաների հետ ունեցած անձնական շփումներից, որոնք երբեմն լրացնում էր իր անձնական դիտարկումներով: Լեհական արքունիքը հաճախ էր օգտվում Ռոմաշկևիչի ծառայություններից՝ նրան որպես իր ներկայացուցիչ ու թարգմանիչ մասնակից դարձնելով գերիների փրկա-

զման գործին:

Չնայած լարված իրադրությանը՝ 17-րդ դարի 50-ական թթ., երբ Դրիմի խանը նախապարտատվում էր Լեհաստանին դեմ պատերազմի, Ռոմաշկևիչին ևս բազմիցս ուղարկում են Բախչսարայ: Այդ համարձակ ու վճռական մարդուն հաջողվում էր ելք գտնել ամեն մի դժվարին կացությունից: Լեհ հետման Սիկույա Պոտոցկին գերեվարվել էր Դրիմի խանի կողմից²¹: Թաթարները հետմանի համար պահանջում էին մեծ փրկագին, որը հնարավոր չէր միանգամից վճարել: Այդժամ թաթարները, ազատ արձակելով հետմանին 1650 թ., մնացած զույմարի դիմաց պատանդ են վերցնում Ս. Պոտոցկու որդուն՝ Ստեֆանին: Պատանդին փախցնելու Ռոմաշկևիչի փորձը ձախողվում է, և նա դրա համար հատուցում է հյուժիչ բանտարկություն: Սակայն ազատվելուց հետո նա դարձյալ կատարում է քաղաքական, առևտրական ու ֆինանսական տարբեր բնույթի հանձնարարություններ²²:

Լեհաստանն հայտնի դեմք էր հայ համայնքի պետ, մեծահարուստ վաճառական ու նկարիչ Կրիշտոֆ Ջախնովիչը²³: 1648 թ., երբ Ուկրաինայի հետման Բոգդան Խմելնիցկու գործերը պաշարել էին Լվովը, նրան որպես հայ համայնքի ներկայացուցիչ, հինգ հոգանոց պատվիրակության կազմում ուղարկեցին թաթարների հետ դաշնակցած կազակների զորակալներ: Չայ համայնքի վերաբերմունքը Բ. Խմելնիցկու զլխավորած ազատագրական շարժման նկատմամբ բացասական էր, քանի որ այն գործում էր Թուրքիայի վասալի՝ Դրիմի խանի հետ դաշնակցած: Չարկ է նշել, որ հայության համար պայքարը Թուրքիայի դեմ ուներ առաջնակարգ նշանակություն, և հայ համայնքի վերաբերմունքն այս կամ այն իրադրությունում ու երևույթին մշտապես պայմանավորված էր նրանով, թե այն ուղղված է Թուրքիայի դեմ, թե ոչ:

Կ. Ջախնովիչն իրեն հատկապես լավ էր դրսևորում Բ. Խմելնիցկու և թաթարական խան Թուրայ-բեկի հետ Լվովի պատվիրակության վարած բանակցություններում: Միաժամանակ նա կատարում էր թարգմանիչի դեր: Ջախնովիչի դիվանագիտական հմտության շնորհիվ հաջողվում է նվազագույնի հասցնել այն ռազմատուգանքը, որ լվովցիները պետք է վճարեին հակառակ կողմին:

Երբ 1655 թ. Բոգդան Խմելնիցկու գործերը երկրորդ անգամ պաշարում են Լվովը, նրա հետ բանակցելու մեկնած և անսահմանափակ լիազորություններով օժտված պատվիրակության կազմում լինում է նաև Կրիշտոֆ Ջախնովիչը²⁴: Շնորհիվ Խմելնիցկու և նրա հաջորդ Ուկրաինայի հետման Իվան Վիզովսկու հետ ունեցած անձնական ծանոթության ու կապերի, տևական և դժվարընթաց բանակցություններից հետո Ջախնովիչին հաջողվում է ձեռք բերել շահավետ պայմաններ ու քաղաքը գերծ պահել գրոհից:

Ուկրաինական գործի հեռանալուց հետո Վլադիսլավ IV-ի հետնորդ Ունեցողությունների գահակալ Յան Կազիմիրը (1648 – 1668) թագավորական դեսպանին և Ջախնովիչին ուղարկում է Չեխիին Բ. Խմելնիցկու հետ հաշտություն կնքելու²⁵ ըստ էության նրան վստահելով այդչափ կարևոր և պատասխանատու գործը:

Ունեցողությունների քաղաքական կյանքին բերած լեհահայերի գործուն մասնակցությունը հատկապես ցայտուն է դրսևորվում այն ժամանակաշրջանում, երբ ուժեղանում է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի դեմ ուղղված թուրք-թաթարա-

կան ագրեսիան: Ավելի քան 30 տարիների ընթացքում թուրք-թաթարական զավթիչները պարբերաբար ներխուժում էին Լեհաստանի տարածք, կողոպտում երկրի բնակավայրերը: Արտաքին քաղաքական մնամ պայմաններում լեհական պետությունը ձգտում էր ստեղծել հակաթուրքական լայն դաշնակցություն և դրա մեջ ներգրավել նաև Իրանին²⁶:

Լեհ-իրանական բանակցություններում կարևոր դեր է կատարել լեհահայ հայտնի դիվանագետ Բոգդան Գուրջեցկին (Գուրդեցկի)²⁷: Նա ծնվել է Վրաստանում Գորիում: Իսկական անունն Աստվածատուր է: Չաստանվելով Լեհաստանում դարձել է Յան Կազիմիրի դեսպանն Իրանում 1668 – 1699 թթ.-ին: Նա 1672 թ. եղել է նաև Ռուսաստանում և ձգտել է Թուրքիայի դեմ քաղաքական համագործակցություն ստեղծել Լեհաստանի, Ռուսաստանի և Իրանի միջև, կատարել է լեհական արքունիքի պատասխանատու հանձնարարությունները: Դիվանագիտական գործունեություն է ծավալել նաև նրա եղբայրը Փարսադան Գուրջեցկին, որը մասնակցել է լեհ-ռուս-իրանական քաղաքական և տնտեսական հարաբերությունների բարելավման գործին, զբաղվել է նաև Չայաստանի ազատագրության խնդիրներով²⁸:

Ունեցողություններից հայտնի դիվանագետներից էր հայազգի Կոստանդին Սուլեյմանյանը, որի նկատմամբ այդ պետության գահակալ Յան III Սոբեսկին (1674 – 1696) առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել:

Կոմս դե Սիրին սեբաստացի հայ ընտանիքի զավակ էր³⁰: Ծնվել է Պորտուգալիայում, որտեղից նա եկել էր Լեհաստան դեռևս Յան Կազիմիրի օրոք: Եվրոպական ու արևելյան լեզուների փայլուն իմացությունը և դիվանագիտական ունակությունները հաշվի առնելով՝ նրան ծառայության էին վերցրել արքունի գրասենյակում: Մի քանի տարի անց նա արդեն լեհական դեսպան էր Վիեննայում: Կոմս դե Սիրին պատասխանատու դիվանագիտական հանձնարարություններ է կատարել նաև Թուրքիայում, Ռուսաստանում, Իրանում և այլուր:

1678 թ. նրան ուղարկում են Մոսկվա ցար Ֆյոդոր Ալեքսեևիչի մոտ՝ Ռուսաստանի և Ունեցողությունների միջև 1667 թ. հունվարի 30-ին կնքված Անդրուսովյան զինադադարը վերահաստատելու³¹, որով ավարտվել էր ռուս-լեհական 1654 – 1667 թթ. պատերազմը: Նա երիցս լինում է Իրանում՝ պարսից շահին հակաթուրքական դաշինքի մեջ ներգրավելու նպատակով: Թեև նրան 1688 թ. մի պահ հաջողվում է հանդգել շահին, որ թուրքական հզորությունը ջախջախված է Վիեննայի մոտ 1683 թ. նրանց կրած պարտությունից հետո, և որ շահին կվերադարձվեն Թուրքիայի գրաված տարածքները, այդուհանդերձ շահը հետագայում իրաժարվում է «Արբազան դաշինքին» հարելու գաղափարից:

Կոմս դե Սիրին դեռևս 1677 թ. Կոստանդնուպոլսում եղած ժամանակ հանդիպում է հայոց պատրիարք Չակոբ Ջուղայեցուն³²:

Բանն այն է, որ Յան Սոբեսկին փայտիցում էր հայոց պետականության վերականգնման գաղափարը³³: Այդ նպատակով նա փորձում էր Ամենայն Չայոց կաթողիկոս Նահապետ I եղեսպագուն հանդգել դաշինք կնքել Չոռմի հետ և խոստանում էր վերականգնել հայոց պետականությունը³⁴:

Այսպիսով՝ համոզիչաբար Հակոբ Ջուղայեցուն լեհական դեսպանը, ըստ էության, քննարկել է հայ ժողովրդի ազատագրության հարցը, որի վերաբերյալ, ցավով, գրավոր փաստաթղթեր չեն պահպանվել: Սակայն որոշակի է այն փաստը, որ լեհական թագավոր Յան Սոբեսկին ունեցել է թուրքիայի թիկունքում հայկական պետականությունը վերականգնելու ծրագիր: Այդ նպատակով նա նամակագրական կապեր է հաստատել նաև Հակոբ Ջուղայեցու հետ²⁵: Սակայն Յան Սոբեսկու՝ 1699 թ. անակնկալ մահն անկատար է թողնում այդ ծրագիրը: Պետք է նշել, որ լեհ պատմիչները Յան Սոբեսկուն համարել են «հայերի մեծ բարեկամը»²⁶:

Կոմս դե Սիրին իր մահկանացուն կնքում է 17-րդ դարի վերջին Իրանում, որտեղ նա գտնվում էր որպես լեհական մշտական դիվանագիտական ներկայացուցիչ:

17-րդ դարում Լեհաստանում դիվանագիտական լայն գործունեություն են ծավալել նաև այլ հայորդիներ՝ Սիմեոն Պետրովիչը, Իվան Նիկորովիչը, Գրիգորի Մեսասովիչը, Գասպար Շիմանսկին, որը եղել է նաև Լվովի գլխավոր թարգմանը²⁷, և այլք: Կատարելով լեհական իշխանությունների պաշտոնական կամ ոչ պաշտոնական կարևոր և պատասխանատու առաջադրանքները՝ նրանք հաճախ անհայտ են մնացել և, ցավով, ըստ արժանվույն չեն գնահատվել լեհ հասարակության կողմից: Այնուամենայնիվ պետք է չմոռանալ, որ լեհահայերն ազնվությամբ

և հավատարմությամբ ծառայել են իրենց երկրորդ հայրենիքին, նպաստել մյուս երկրների հետ լեհական պետության քաղաքական, առևտրա-տնտեսական հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը, ինչպես նաև մշակութային կյանքի առաջընթացին:

Վաչագան Արշալույսի ԽԱԾՎԿՅԱՆ, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գրականություն

¹Տե՛ս ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմություն, Պոսթըն, 1947, էջ 369-370:
²Гробовецкий В. В. Армянские поселения – В сб.: Исторические связи и дружба украинского и армянского народов. Ер., 1961, с. 47.
³Ի. Ա. Լիննիչենկո, Լեհաստանի և արևմտյան-հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894, էջ 29-30:
⁴Նույն տեղում, էջ 30:
⁵Մ. Բժշկեան, ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1839, էջ 142:
⁶Նույն տեղում, էջ 143:
⁷Ֆ. Ք. Ջախարիասկիչ, Տեղեկագիր Լեհաստանի հայերի մասին, Ս.-Պետերբուրգ, 1842, էջ 123:
⁸Ղ. Ալիշան, Կամենեց. տարեգիրը հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, Վենետիկ, 1898, էջ 54:
⁹Սեջբերունը կատարված է Ի. Լիննիչենկոյի կողմից լեհահայ Սարկո Բարոնչի 1852թ. Վարշավայում լեհերեն հրատարակված «Լեհաստանի ականավոր հայերի կենսագրությունները» աշխատությունից. – Տե՛ս Ի. Ա. Լիննիչենկո, նշվ. աշխ., էջ 42-43:
¹⁰Ֆ. Ք. Ջախարիասկիչ, նշվ. աշխ., էջ 137:

¹¹Ի. Ա. Լիննիչենկո, նշվ. աշխ., էջ 47:
¹²История Польши: в 3-х т. Т. 1. Под. ред. В. Д. Корольюка, И. С. Миллера, П. Н. Третьякова, М., 1956, с. 243.
¹³Մ. Բժշկեան, նշվ. աշխ., էջ 150:
¹⁴История Польши, т. 1, с. 175.
¹⁵Ի. Ա. Լիննիչենկո, նշվ. աշխ., էջ 84:
¹⁶История Польши, т. 1, с. 254.
¹⁷«Ապարեզ», Ֆրեզոն, 26.06.1936:
¹⁸Նույն տեղում:
¹⁹Ֆ. Ք. Ջախարիասկիչ, նշվ. աշխ., էջ 142:
²⁰«Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1926, էջ 237-238:
²¹История Польши, т. 1, с. 279.
²²«Հանդես ամսօրեայ», էջ 239:
²³Ի. Ա. Լիննիչենկո, նշվ. աշխ., էջ 81-82:
²⁴История Польши, т. 1, с. 290.
²⁵Там же, с. 288.
²⁶История Польши, т. 1, с. 319.
²⁷Ս. Բախչինյան, Հայագի գործիչներ: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Կենսագրական համարագիտակ.- եր., 2002, էջ 185:
²⁸Նույն տեղում:
²⁹Նույն տեղում, էջ 185-186:
³⁰Ս. Գ. Արքահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, եր., 1964, էջ 220:
³¹Նույն տեղում, էջ 220-221:
³²Նույն տեղում, էջ 221:
³³Ս. Ալպոյանյան, ճանապարհորդություն ի Հայպեշտան ժե դարում, Կահիրե, 1946, էջ 63-64:
³⁴Նույն տեղում, էջ 64:
³⁵Նույն տեղում:
³⁶Ս. Գ. Արքահամյան, նշվ. աշխ., էջ 216:
³⁷Ս. Բախչինյան, նշվ. աշխ., էջ 191:

Ամրեի ժայռը

(պատմվածք)

Նեղ, ուղորուն նրբանցքի վերջում, արևախանձ շեկ ժայռի մոտ, պարզորոշ լսեցի ծանոթ ձայնը.

– Անտոնյան, փողերս ե՞րբ ես տալու...
 Մեխվեցի տեղում: Մագաղաթ ծերունու ձայնն էր: Նա արևը ծագելուն պես տնից դուրս էր գալիս՝ գիրքը թևատակին, ձեռքին այծի մորթի, բերանին մշտավառ ծխախոտ, հարմարորեն տեղավորվում էր ժայռի տակ, մեջքը դեմ էր տալիս արևին, որ գու՛ր գցի ծեր ոսկորներն ու թանձրացած արյունը:

Ուզում էի պատասխանել. «Աի քիչ է համբերիր», հիշելով, որ նման դեպքերում Նա դժգոհում էր՝ «Համբերել եմ, էլի՛, ինչքա՞ն համբերեմ»:

«Անհամբեր ես համբերում», – կատակում էի ես ու շարունակում ճանապարհս:

Ետևիցս լսում էի նրա «օ՛ֆ»-ն ու հոգոցները: Օրերս նրա «օ՛ֆ»-ն ու հոգոցները վերստին լսեցի երկարատև ընդմիջումից հետո: Ետ նայեցի: Աչքերս չորս արի: Ոչ ոք չկար: Շեկ ժայռն էր միայն արևախանձվում բոց արևի տակ: Մինչդեռ պարզորոշ իրնչեց հարցը՝ «Անտոնյան, փողերս ե՞րբ ես տալու...»: Տարակուսեցի՝ ինձ հետ ինչ որ բա՛ն է կատարվում: Թե՞՞ հրեղեն ժայռն է իր մթին խորշերում պահում մագաղաթ ծերունու հոգու տրտունջներն ու ցավագին տվայտանքները:

Քաղաքի կենտրոնական հատվածում գյուղ հիշեցնող մեր փողբիկ թաղամասում, որ ձրգվում է նեղ, ուղորուն նրբանցքի երկայնքով,

Նրա տարիքի մարդ այլևս չկար. շրջակա լեռներում տեղացած ձյան նման հալվել-հեռացել էին այս աշխարհից: Տճից դուրս էր գալիս, տարեկից չկար, որ հալը հարցներ, մի երկու խոսք փոխանակեր, «բարլուսի» (մի-մի թաս օղի խմելու) հրավիրեր: Մոտենում էր 50-60 տարեկան երիտասարդ ծերերի խմբին, իսկ նրանք թղթախաղով տարված՝ չէին էլ նկատում պատկառելի ծերունու ներկայությունը: Եվ այդ աշխույժ, ուշիմ մարդը, որի մի աչքը մշտապես տխուր էր, մյուսը՝ ժպտուն, զլխիկոր հեռանում էր՝ ժպտուն աչքը փակ: Նրա ամենօրյա աչքն ու ականջը, գրուցընկերներն արդեն արեգակի նորածիլ շողերն էին, շեկ ժայռը, գրքերն ու ծխախոտը:

Թե՛ն Նրան մանկուց էի ճանաչում, բայց մեր միջև բարեկամական յուրօրինակ հարաբերություններ հաստատվեցին հանկարծակի: Այգում քթքթացել էր, ջրել էր ծառերը, բանջարանոցը, եկել-մտել էր իր ժայռին ու արևկող էր անում: Աշխատանքի գնալիս նկատեցի նրան. ծխախոտը բերանին դեռ մխում էր, գիրքն ընկած էր գետնին, իսկ աչքերը փակ էին: Թե՛ն չէր, ծխախոտի ծուխը աչքերը փակ էր ներս քաշում: Նիրհում էր: Մտածեցի՝ աննկատ անցնեմ, չանհանգստացնեմ: Բավական հեռացել էի, լսեցի.

– Անտոնյան, մի բարև-բարլուսի արժան չե՞մ... Ետ դա՞ն՝ կարգին բարևե՞ք, այտա՛...
 Անոթահար ետ դարձա, բարևեցի:
 – Նսիր, մեր տղա, կասե՛՞ս՝ փողերս ե՞րբ եմ

տալու:
 Խոսքը Խորհրդային տարիներից խնայբանկերում նաև իր ունեցած ավանդների մասին էր, որոնք մեր կառավարությունը խոստացել է բնակչությանը փոխհատուցել: Պատահաբար իմ ձեռքում էր թերթի այն համարը, որում ավանդների մարման մասին տպագրված էր սոցժառայության պատասխանատուների պարզաբանումը: Բացեցի, կարդում եմ. «ՀՀ կառավարության այսինչ թվականի թիվ այսինչ որոշման համաձայն՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թ.-ի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված Օ-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների կազմում ընդգրկված՝ մինչև 1929 թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված կամ ՀՀ պաշտպանական մարտական գործողություններին մասնակից անձանց: Փոխհատուցում ստանալու համար ավանդատուները հաշվառման նպատակով սոցժառայությունների տարածքային բաժիններ անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով ներկայացնում են դիմում...»:
 Կարդում եմ, բայց և տեսնում մագաղաթ

280

դեմքը կճռոտվում է: Վերջն ունքերը կիտեց և դժգոհ ընդհատեց. «Արևիկ մեռնեմ, եզրույթակախ (տերմինախեղդ) մի անի: Պարզ ասա, շիտակն ասա՝ ինձ հասնու՞մ է, թե՞ չի հասնում»:

Պատասխանում եմ, միաժամանակ Նրա խոսակցականում նկատում բարբառայինից գրականին կտրուկ անցումները, որոնք, անշուշտ, զարմանք կպատճառեն բոլորին.

– Առայժմ ոչ: Ձեր տարիքը չի համապատասխանում, դեռ մեծանալու տեղ ունեք:

– Ո՞նց թե տարիքս էնիք չի անում, – զարմացած աչքերը հառեց վրաս: – 84 տարեկանին հրես քացի եմ տալիս, փո՞քր եմ: Էսօր կամ վաղը՝ չկամ...

– Համբերել եք, մի քիչ էլ համբերեք, Ձեր հերթն էլ կհասնի, – փորձեցի մխիթարել Նրան:

– Հեշտ ես ասում: Բա որ Գափոն (Գաբրիել հրեշտակապետը) կանչի, ասի՝ հերթդ հասել է, տանում եմ, իմ հերթն ու՞մ տամ...

Փորձեցի հանգստացնել, իբր՝ մեր կառավարությունը մտահոգ է խնդրով, բայց չի կարող բոլորի գումարները միանգամից ետ վերադարձնել, դրա համար ժամկետներ է սահմանել, կամաց-կամաց պարտքերը կմարի: Ինքն առույգ, աշխույժ մարդ է, դեռ կապրի, ինչքան՞ մնաց, որ... ևս մեկ-երկու տարի՝ հարցը վերջնականապես կլուծվի...

Ամեն օր արթնանալով և Աստօն արդար լույսով ողողվելով՝ ոչ ոք չի կարող ենթադրել, թե ինչ անակնկալներ է նախապատրաստել նորաբաց օրը ամեն մեկիս: Կարծում էի, թե գործի եմ գնում: Բայց շաբաթն ուրբաթից շուտ եկավ: Զրուցակցիս մի աչքը մեկնեմ ժպտուն դարձավ, դեմքը պարզվեց, ոնց որ մթին ամպերի ետևից լույս ճառագեղ:

– Բարի լույս ասացիր, չէ՞, – հարցրեց խորամանկ: – Դե, որ բարի լույս, ուրեմն արի մի կարգին «բարու» անենք:

Հասկացա ակնարկը: Աշխատանքի շտապելը պատճառ բերելով՝ փորձեցի հրաժարվել:

– Բա էլ ի՞նչ «բարիլույս», – կեղծ զայրոթով շարունակեց Նա: – Պլոճիկ չունե՞ս, որ մի օր էլ գործի չգնաս: Հեռախոսը ձեռքիդ է, երբ էլ զանգեն տեղում ես, էլի՞: Տնաչեն:

Փորձում եմ համոզել՝ հողված ունեն գրելու:

Իսկ Նա եռանդով իրենն է պնդում. «Հողված գազան չի, ամտառ չի փախչի: Վաղն, իհարկե, չես կարող, բայց մյուս օրը հաստատ կավարտես: Որտե՞ս/որովի՞ետև/ վաղը դեռ քե՞ֆը լավ կլինի: Հասկացա՞նք: Դե ասա՛՛ էմ ի՞նչ ծաղիկ է:

ժայռի կողքին Նրա խնամած այգին է: Այգու վարդի թխերից մեկն է մատնացույց անում:

- Վարդ:
- Ապրես: Բա ռուսերեն ո՞նց կլինի:
- Ռոզա, – իմ պատասխաններն ակամա ու շփոթ են:
- Կեցցես, հիշեցի: Ժենևա:

Տիկնոջն է կանչում, որի անունը ժենևեվա է: Այգու ցանկապատի դռնակը ետ գնաց, հայտնվեց կորացած մեջքով կինը: Նա հենվեց ձեռնափայտին և անմեղ հարցրեց՝ Ի՞նչ է պատահել, Ամրեհի...

– Ցավն ու չորը Ամրեհուդ խեղդում է, էլ ի՞նչ պիտի պատահի, – կատակի տվեց Նա՝ շարունակելով, – կրակը կպցրու, գալի՛ս ենք... Բոցելու օր է, խոսելու օր է, քե՞ֆ ենք անելու: Ժենև ջան, դեռ տստե՞ղ ես, թո՞՛ր, է՛...

Որքան էլ ընդվզեմք, պիտի ընդունենք, որ մարդիկ իրադարձությունների գերի եղել են ու գերին էլ մնում են: Իմ անակնկալ, «ասպետական» հարցը՝ «Ինչպե՞ս, մի՞ թե տիկինն է մեզ համար խորովածի կրակ վառելու», դրա և այն բանի վառ ապացույցն է, որ այդ պահին «իրադրությունն իրոք վերահսկողությունից դուրս էր»: Այդ շլուղոր հարցը, որ անվերապահ «կապիտուլյացիա» դիտվեց, ավելի վճռորոշ դուրս եկավ, քան առաջարկն ընդունելուց իմ հրաժարումը:

Տիկինը շտապեց ամուսնու համծնարարությունը կատարելու՝ իր հետ տանելով իմ տարակույսները: Ծեր Ամրեհին լիովին վստահացավ, որ ետդարձի հնարավորություն չունեն, հրավերն ընդունված է: Թև ընկավ, առաջնորդեց այգի, այդ ընթացքում խոսելով. «Կասե՛ս, էս մեր Սոկրատեսն ինչի՞ քանդակագործությունը թարկեց և իմաստնության պոչը բռնեց: Ասա՛ տո Սոկրատես, փող էիր վաստակում քեզ համար, էլի՞: Պատվերների պակաս հո չունեիր: Որ ի՞նչ թողիր, սոված, ոտաբորբիկ Աթենքի փողոցներն ընկար... Աղքատ ու հպարտ մարդ: Նրա արարքը երկի մեր հասկանալու բանը չի... Իմ կարճ խելքով՝ ով արևածաղիկ է չրթում, պարտադիր չէ, որ Սոկրատես լինի... Ես էլ մեր այգի՛ն: Նստիր, հարազատ, նստիր՝ մի պատառ հաց կիսենք: Ժենև, արագացրու:

– Ես մարդն իսկի համբերություն չունի, – արդեն վառվող կրակի մոտից լավեց կնոջ մեղմ համդիմանությունը: Հետևացի, թե ինչպիսի վարպետությամբ է միսը շամփուրներին շարում: Նկատելով զարմանք, Ամրեհին երանությամբ ասաց.

– Աղեկ կին՝ չունի գին: Ես եմ սովորեցրել, ե՛ս: Թասդ բեր: Բարլուսներս՝ բարի: Այ սա եղավ «բարլուս»: Թե չէ... Այտա, տիե՛ ըլիլ չի, մինչի խորովածի բերելը մի պատառ հացուկամիր դրու բերանը: Համ էլ, որ ես բոցին (ցույց է տալիս երեք լիտրանց բանկայով օղին) դիմանանք: Խմելու ենք, է՛, բոցելու ենք... Դու մենակ լից: Գիտես չէ՞, թե Կուտուզովի աչքը խի էր խարաբ... (չգիտեի): Որտե՞ս Սոկրատեսի բաժակը վախտը-վախտին չէր լցնում, սովին-փչացրին: Տե՛ք բան: Այտա, մոռացա իմ թանկագին հյուրի կենացը խմեն: Ներելու է, անտեր Սիբիրներում ուղեղս հուր-հավիտյան սառցակալեց (պապին, հորը անհայտ պատճառներով աքսորել էին Սիբիր, որտեղ էլ ծնվել էր ինքը): Կենացդ, ժուռնալիս: Ասում են՝ գրիչը աջ էլ կտրում, ծախ էլ: Հալալ է: Բայց ինձ համար քոռանում է: Ոչինչ, կենացդ, ողջ լինես, օրը կգա՝ բարին հետը...

Տիկինը մեկ շամփուր միս հանեց կրակից ու դատարկեց հացի միջուկի մեջ:

– Օգտվեցեք, – օրիորդավարի հրամանեց նա ու էլի դեպի կրակը գնաց:

– Է, Ամրեհի, Ամրեհի, էս ի՞նչ օրի հասար, – մի կտոր միս բերանը գցելով՝ շարունակեց Նա: – Բա մարդ 8 զավակ ունենա, 28 թռուծո՞ւ, ու ոչ մեկը չգտնվի, որ կռնեիրիդ ջուր ածի՞: Այ մարդ, բա ես հացը ո՞նց եմ ես մենակ ծամում, ո՞նց է կոկորդոս կուլ գնում: Այտա՛, աժա, պնչեքս չորացան... Իրենց կենացը, բոլորի զավակների կենացը: Մենակ չեն, աշխարհովի է: Իմոնք էլ մոտս չեն, թող արևաշխարհի լինեն, ապրեն, գորանան: Կրթության տվի, ամեն մեկը մի-մի իմաստու վերացրուց, մեկն էլ՝ երկու իմաստու, ու թևին տվին, չվեցին Ռուսաստան: Տերդ մեռնի, երկիր, եղբանին ո՞նց ես պահում, ո՞նց

ես քեզանով անում: Թռուծո՞ւն մեծ մասին տեսած չեմ, երեխեքիս դիմագիծերն էլ եմ մտախան արել: Գալիս չե՛մ... Բայց կգամ: Կգան այն ժամանակ, երբ էն աշխարհը գնցած կլինենք: Կգան, վրաներս մի բուռ հող կլցնեն, մի երկու ճլորած ծաղիկ կդնեն ու էլետ կհեռանան:

– Այ մարդ, դարդերդ քամուն մի տա, էս տղեն ի՞նչ մեղավոր է, որ դու դարդոտած ես, – տիկինն էր, որ նոր շամփուրը ձեռքին աննկատ մոտեցել էր ու լսել խոսակցությունը: – Մեղավորը դու ես, մեկ էլ՝ ես:

– Հա, կնիկ ջան, մեղավոր եմ: Ինձ ասա՛՛ ի՞նչ գործ ունեիր անտեր քաղաքում: Գեղի տղա էի, կաթնումածո՞ղ մեծացած փահլեհան տղա: Ասա՛՛ ի՞նչդ էր պակաս, որ հայրենի ուտանդ, շեն տունուտեղդ թողեցիր, եկար էս անտեր քաղաքում բուն դրիր, որ ի՞նչ անես: Ինչ գյուղ ունես: Ինչ մա՛րդիկ կային... Էն Կոլանց Ակովը որ գեղամիջունը դշողո՞ւ էր (գոռում էր) տալիս, Պառատանց Դուրմիշի գամփոք ջնջից պոկվում էր, հասնում վիրի օթախն ու երկից զոգեն (փականը) պինդ գցում: Ես էդ տեսակ գյուղ քեցի, երեխեքս էլ՝ մեր երկիրը: Հետո էլ իրենք իրենց գլխին իմ նման վա՛յ կտան: Սակայն ուշ կլինի: Մեր երեխեքի կենացը արի մեկ էլ խմենք: Մեռնեն ձեզ, բալե՛ք ջան, ու՛ր եք: Մեղավոր եմ: Դրա համար էլ պատժվեցի: Երեխեքս հեռացան: Անվերադարձ հեռացան: Էստեղ (հայացքը գետնին) որ չներվեցի, էնտեղ (դեպի երկինք) ո՞նց կներվեն: Այտա, թե վարում, թե վերում, մեղքն ու անկունը չե՛մ ներվում:

Բայց մի բան ասե՛մ լսիր: Հիշու՞մ ես՝ ավտոն բարձր են բերում, քաղի կես տեղը կանգնեցնում էի ու ասում՝ ժողովուրդ, ում ինչ պետք է, քանի արկղ պետք է, պետք չէ՛ տարեք (տանողներից մեկն էլ ես էի ու հիշում էի): Էդ ո՞նց էի անում: Համայնական դաշտերն էի գնում, դաշտավարների փող էի տալիս, բրիգադիրներին տալիս էի, սով-խոզի, կոլխոզի դիրեկտորներին տալիս էի, որ լավ ապրանք բարձեն: Սաղ զիշերը ոտքի վրա՝ առավոտյան քնահարամ՝ ետկրնկին քաղաք էի քշում, որ քաղաքացիք պտուղբանջարեղեն ուտեն: Միցեն գլխիս կանգնում էր, իմ տնօրենը՝ մյուս կողմից, էն մեկելը՝ էն մյուս կողմից: Որի՞ն հիշեմ, որին թողնեմ: Տվել եմ ու սվել: Բայց ժողովրդին օգուտ էլ եմ տվել, չէ՞: Շուկայից էժամ եմ տվել, չէ՞: Մի երկու կուպեկ էլ որ երեխեքի բերանից կտրել, մեղ օրվա համար պահել ու «գրեկական» եմ դրել, էդ է եղել իմ ես գցածն ու խնայածը: Հա, մեկ էլ գրադարանիս զորքերը: Ո՞վ է կարդալու եղբան գրքերը: Ու՞ր են կարդացողներս: Փոշու մեջ կկորչեն իմ նման խեղճուկարակ գրքերս: Լացս է գալիս: Այտա՛, ինչի՞ց էինք խոսում: Հա՛, հիշեցի: Նեղ օրն արդեն եկել է, ու արյուն-քրտինքով վաստակած փողերս ետ չեն տալիս: Բա ո՞նց անես: Հեջ բան էլ չանես: Լից, լավ օրերի կենացը խմենք: Ժենևա, խորովածը կամաց-կամաց արա՛ սեղանին չնմա-հովանա:

– Հրամանքդ, աղա՛, – ասաց տիկինն ու նոր շամփուր մոտեցավ սեղանին, շամփուրը մսագեթո՞ճեց և երանությամբ խոսեց. – Ամրեհի ջան, լավ օրեր ասիր՝ միտս ընկավ: Մի պատմիր, թե ոնց կիմոքատորնի բոլոր տոմսերը գնեցիր ու նվիրեցիր սիրահար գույգերին:

– Էդ հո մի անգամ ու երկու անգամ չեմ արել: Արի էս մի բաժակով էլ սիրահարված

290

զահելների կենացը խմենք՝ հետո կպատմեն: Սիրահար գույզերի կենաց: Որ չլինեն կյանքը շարունակվիլ չի: Հա, ուրեմն, մեկը կար, սիրունիկ-միրունիկ, պեծն էրեսին աղջիկ էր: Մի օր թե՛ ինձ կհնո տար: Տեխնիկումի ուսանող տղա, ինչո՞վս տանեի: Խռովեց, հեռացավ: Ամոթուց էլ երեսը չտեսա: Երկի ճիշտ եղավ: Արի իր կենացն էլ խմենք: Ուսնկայս խմենք: Կենացո, սիրուն ջան, իմ առաջին կուտ գնացած սեր: Չհեռանար, ժենկիս չէի գտնի: Այտա, տեսնու՞մ ես ինչ լավ-լավ կենացներ են ասում: Շուն քարշ տալն էլ փեշակ է: Իմ քաշուի օղին շատերի գանգի դպիրը տեղաշարժում է, մինչդեռ ինձ տեղն է գցում: Այ, տհե բան է իմ օղին: Բեր երջանկություն ասածի կենացն էլ խմենք: Կհարցնես ես երջանի՞կ մարդ եմ: Բա ի՞նչ եմ, որ երջանիկ չեմ: Բանկում ետ գցած գունար ունեմ, Ռուսաստաններում մեծ գերդաստան ունեմ, որ կարծում էի, թե մեզ ու երկրի համար ենք ետ գցել: Խնայքանկի փողերի պես նրանք էլ ինձ չեն տերը տված են: Շատերի մեջ ես քչերից չեմ: Ոչ մեկս էլ հավասար չեմ ոչ օրենքի, ոչ էլ կյանքի առջև: Մարդկանց թվում է, թե իրենք են որոշում ու գործում, մինչդեռ հաստատ մի աներևույթ ուժ է ուղղություն տալիս ամենքիս և ամեն ինչին: Ահա ինչու հարկավոր է, որ կյանքում ինչ որ բան թողնենք ինքնահոսի, բախտի քմահաճույքին: Երջանիկ է նա, ով գիտի, որ այս կյանքում շատ բան իր ուզածով չի լինում ու ինքը ոչինչ անել, փոփոխության ենթարկել չի կարող:

Բախտի ու ճակատագրի կենացը: Խմենք՝ ասեմ (խմում ենք): Քաղաք, տերը մեռնի քաղաք: Քաղաք՝ նշանակում է՝ թող, փոշի, աղմուկ, ունայնություն ու դատարկություն: Մենք մեր թռչակով ենք հացուցորդ ամուսն ասարուն: Նրանց (նկատի ունի երեխաներին) ուղարկած փողը ետկրնկին ետ են ուղարկում իրենց: Նրանք էլ էնտեղ իրենց դժվարություններն ու հոգսերն ունեն: Թող ամուր մնան: Մենք ամուր ու պինդ՝ ամրապինդ ենք: Այտա, բեր մեր արմատների կենացը ըմպենք: Մենք արմատներ ունենք հողում, մեզ քոքահան անելը գոռ, շատ գոռ բան է: Ապրես, կնիկ ջան, խորովածը շատ «սոչնի» ես սարքել... Հյուրասիրվիր, տղա: Ընկերներս գնացին ես կյանքից: Մենակ մնացի: Պիտես ընկերները կրկնապատկում են ուրախությունները, կրճատում վշտերը: Նրանց կենացը: Փառք Աստծո, կնիկս կողքիս է: Լա՛վ ընկեր է: Կյանքի ընկեր: Հա, հա՛, խմենք ընկերների

կենաց: Իմաստուն ենք դարձել, փիքը ենք անում աշխարհի շառուխերից: Ինչների՞ս է պետք իմաստությունն այս տարիքում: Կինս ու ես դրա կարիքն այլևս չունենք: Մեզ ես այգում պտուղ վայելող էլ հարկավոր, տան մեջ օրորոց ու մանկան ճիշտադաս է պետք: Քանի՞-քանի՞ պեծուկրակ հայ հայի օջախի կրակ չի բորբոքում: Ամոթուց տաքուհով ենք լինում: Մեր հողուջրի կենաց, մեր երկրի կենաց: Ասում են հողի մեջ երգեր կան թաղված, անթիվ-անհամար գանձեր կան պահված, սեր ու զարթոնք կա անթեղված: Ինձ բանկի փողերն այնքան չեն հետաքրքրում, որքան մեր երկրի վիճակը: Ինձ հետաքրքրում են ճշմատության, արդարության վերականգնումը, սիրո, մարդկայնության, խղճի ու բարոյականության հարությունն ու վերադարձը: Լսիր մեր Համոն ինչ է գրում. «Աչքիս մեջ մազ փնտրեցին, մահացու խոցս չտեսան, իրենց աչքի առջև այրվեցի, բոցս չտեսան»: Մեր Սահյանի կենաց, մեր մեծերի կենաց: Որ չլինեին, մենք ու՞մ էինք պետք: Տղա ես պատասխանիր հողից ո՞նց է ելնում արևը, ջուրն ինչու՞ է կորչում հողում, մա՞րդն ինչու է մի օր անհետանում: Անհետանու՞մ է, թե անմահանում: Հանգչում են մարդիկ, որ նորերը գան, լցնեն աշխարհը, շենացնեն այն: Մայր է մտնում արեգակը, որ վաղը նորից դուրս ելնի ու շողեր սփռի, ջերմացնի մարդկանց, նրանց սառած հոգիները: Մարդ որ ծառից, թփից, հողից ու մարդուց բան չհասկացավ, ծնող չհարգեց, էլ ի՞նչ մարդ: Մարդու շվաք, ուրիշ ոչինչ: Մեծ մարդիկ էին մեր ծնողները: Ծնողաց կենաց: Կնիկ, խորովածը տաք բեր: Տեսել ես, չէ՞, մոխիրը տաք է, բայց մեջն իսկի պեծ չկա: Իքստիքյան (ինքնաստիքյան) պարզ է այդպես են մարդիկ հեռանում կյանքից: Այդպես են հեռանում հայրենիքից: Իհարկե, սխալ են ամուսն, որ հեռանում են: Ամեն պեծ պետք է մնա իր մոխիրում և տերը դառնա իր երկրի: Նրանք պիտի ստիպեն, որ իշխանավորներն ապահովեն այն ամենը, հանուն ինչի իրենք հեռանում են օտար երկրներ: Բայց արի ու տես, որ սրանց (իշխանությունների) սարքած տակառն անգամ իր մեջ կարտոլ չի պահում: Վաղ զարմանը գյուղացին տագնապի մեջ է՝ բերք կունենա՞, թե՞ չէ, աշմանն էլ տագնապահար է՝ բերքն առնող չունի: Օրեմս (հասկացիր՝ ուրեմն), մեր խեղճ ու հպարտ, աշխատավոր ժողովրդի կենաց...

Այդ պահին աղմուկ ու դղիրը լսվեց, թվաց, թե թշնամու տանկերն են ներխուժել Հայրենիք: Մոտակա ռեստորաններից հնչում

էին համազարկեր ու կրակահերթեր, որոնք ապացուցում էին կերուխում անողների խնդության ու հրճվանքի անսահման լինելու մասին: Գունառատ համազարկերը մշտապես ահուսարասափի մեջ էին գցում համաքաղաքացիներին:

– Երկի տղերքը մեր Անին գրավեցին: (ուշադրությունը լարելով): Չէ՛, շատ են ուրախ, ծեռքի հետ հաստատ Ղարսն էլ են ազատագրել, – ծանր ու լուրջ նկատեց տանտերը և բաժակն ինձ մեկնեց՝ լցրու, տղերքի կենացը մեկ համազարկով խմենք:

Խմեցինք այդ բաժակը և: Տիկնոն ինձ առաջարկեց կրակին դրված սուրճին հետևել՝ հանկարծ ջրափի, մինչև ինքը տնից իր թխած քաղցրավենիքից կերի: Երբ սուրճը պատրաստ էր, նկատեցի, որ Անրեհին գլուխը սեղանին դրած՝ նիհուս է: Երեկո էր արդեն: Խանձված ժայռի տաք շունչը դադարեց, մինչ այդ գրեթե անշարժ ծառերի սաղարթներում պար բռնեցին գետից բարձրացող զով հովի թևերը: Իրիկնային մենության մեջ ծանուրթեթև էի անում օրվա անցուդարձն ու նրա խորհուրդը: Մագաղաթ ծերունու ժայռեղեն հոգու ճիչն ու խոհերը համակում էին ինձ, ներծծվում արյանս կաթիլների մեջ: Տիկնոն ետ եկավ: Հարցրեցի՝ տուն չտանե՞նք: Ասաց՝ չէ, դու բաժակը լցրու՝ կլկոցից կարթնանա: Տեղեկացրի խմել չեմ ուզում, անկարող եմ: Ասաց. «Էդ դեպքում դու արխեին տուն գնա, ինքն իր ոտքով տուն կհասնի»:

Բարի գիշեր մաղթեցի, հեռացա: Հաջորդ օրերին, երբ Նրան տեսնում էի ժայռի տակ, մեջքն արևին, մեր միջև սկսվում էր ծանոթ երկխոսությունը.

– Անտոնյան, փողերս տ՞որք ես տալու: «Համբերիր, մի քիչ էլ համբերիր»: Իսկ ևս դժգոհում էր՝ «Համբերել եմ, էլի, էլ ո՞նց համբերեմ»:

«Անհամբեր ես համբերում», – կատակում էի ես ու առաջ անցնում:

Ետևիցս լսում էի նրա «օ՛ֆ»-ն ու հոգոցները:

Ամիսներ անց, օրերից մի օր, դրանք վերստին լսեցի: Ետ նայեցի: Աչքերս չորս արի: Չէ, իրոք ոչ ոք չկար: Շեկ ժայռն էր միայն արևախանձվում թունդ արկի տակ: Բայց չէ՞ որ պարզորոշ հնչեց հարցը՝ «Անտոնյան, փողերս տ՞որք ես տալու...»:

Երկի ինձ հետ ինչ որ բան է կատարվում: Իսկ գուցե՞՞ հրեղեն ժայռն է իր մթին խորշերում պահում մագաղաթ ծերունու հոգու տրտունջներն ու տվայտանքները:

Պատկերակապ

Հին Հունաստանի անվանի իմաստասերներից՝ Քսանթոսը, մի օր ճաշկերույթի պատրաստություն էր տեսնում. ևս իր ստրուկ Եզովպոսին հանձնարարում է շուկայից բերել աշխարհի ամենալավ բանը, որպեսզի պատվի հյուրերին: Ճաշի ժամանակ յուրաքանչյուրի պոչն դրվում է մի աման լեզու: Քսանթոսը զարմացած հարցնում է Եզովպոսին, թե ա յս էր աշխարհի ամենալավ բանը: Ստրուկը պատասխանում է. – Անշուշտ, դրանից ավելի լավ բան չկա: Դրանից են դուրս գալիս ամեն իմաստություն ու զվարթ երգ: Լեզվով են կառուցվում քաղաքներ և մարդիկ իրենց միտքն ու զգացմունքները լեզվով են արտահայտում: Մի ուրիշ անգամ Քսանթոսը Եզովպոսից պահանջում է, որ շուկա գնա և բերի աշխարհի ամենավատ բանը: Ստրուկը դարձյալ լեզու է բերում: Տերը շփոթվում է ու բարկանում նրա վրա, բայց վերջինս հանդարտ բացատրում է. – Մի գայրանար. տեր իմ, լեզվից վատ ի՞նչ կա աշխարհի վրա: Դրանով կործանվում են քաղաքներ, սավում են ստերն ու հայիտյանքները: Լեզուն աշխարհի ամենալավ և թե ամենավատ բանն է. նայած թե ինչպիսի բերանում է գտնվում և ո՞վ է նրա տերը:

Բացի բարձրագույն կրթությունից, պետք է ունենալ նաեւ միջնակարգ ըմբռնողություն եւ փարրական դաստիարակություն:

Ընդունիքը հոր թագավորությունն է, մոր աշխարհը, երեխայի դրախդը:

Մենք ոչինչ չենք բաշխում այնպես առապորեն, ինչպես խորհուրդները:

Արածներիդ համար երբեք չես ասելու՝ այս ու փստոս, – Չարածներիդ համար պիտի ասես՝ փստո՛ս, հազար փստոս... Կահան ՏԵՐՅԱԼ

Երեք հանդիպում Սարոյանի հետ

Հավաքեալ կարելի է այնպիսի հայի հանդիպել, որը իր նշանավոր որևէ ցեղակցի անունը չիմանա, որքան էլ հայրենիքից հեռու ապրելիս լինի: Վիլյամ Սարոյանի անունը ես վաղուց էի լսել և վաղուց էի երազում նրան հանդիպելու, լեզենդար այդ մարդուն գոնե մեկ անգամ տեսնելու, լսելու մասին: Այդ երազանքս առավել իշխող դարձավ էրենբուրգի «Դարի ճանապարհը» հողվածը կարդալուց հետո, որտեղ Սարոյանը հիշատակվում է որպես 20-րդ դարի խոշորագույն գրողներից մեկը: Բացի այդ, ինչպես յուրաքանչյուր հայ, ես էլ միշտ հպարտացել եմ հռչակավոր իմ հայրենակիցներով:

Ինչպես հաճախ է լինում կյանքում, այդ երազանքը բավականին վերացական էր, գրեթե անիրականանալի մի անուրջ: Բայց ահա պարզվեց, որ նրան վիճակված էր իրականանալ: Մի անգամ – դա 1960 թվականին էր – իմ հեռախոսը զնգաց, և ես անմիջապես ճանաչեցի Ռուբեն Միմոնովի մեղմ ու թավշյա ձայնը:

– Նիկոլայ, շտապ եկեք թատրոն, գործ կա: Ես Ձեզ ճեմարահուռ կապասեմ:

– Շատ լավ, Ռուբեն Նիկոլանից, շուտով այդտեղ կլինեմ:

Այդպես էլ չբացատրելով, թե բանն ինչու՞մ է՝ նա կախեց լսավողը:

Այդ օրը հյուրեր ունեի Երևանից, ընկերներս էին՝ ճարտարապետներ Մարտին Միքայելյանը և Էդիկ Արևշատյանը:

– Տղերք, Ռուբեն Միմոնովի էր, ինձ շտապ կանչեց թատրոն: Շուտ կգամ, ներկայացմանը չեմ մաս:

Ճանապարհին մտքովս ինչ ասես անցնում էր, բացի նրանից, ինչ իսկապես սպասվում էր ինձ: Ավելի ճիշտ, ես հիմնականում մտածում էի, որ ահա վերջապես Միմոնովին ինձ առաջարկելու է թատրոնի նոր ներկայացման ձևավորումը: Նա վաղուց նման մտադրություն ուներ:

... Ամբարդ ճեմարահուռ, հենց հսկիչի մոտ ինձ դիմավորեց Միմոնովը: Բարևեց ու ձեռքը բարեկամաբար դնելով ուսիս՝ ասաց.

– Այսօր մեր թատրոնում է ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանը: Դուք լվե՛լ էք նրա մասին:

– Այո ո՞վ չգիտի, որ Ամերիկայում ապրում է մեր Սարոյանը:

– Գնանք, ես Ձեզ ծանոթացնեմ: Թարգմանչուհին խաբրեց մեզ, ու նա հիմա դիրեկտորական օթյակում մենակ է ներկայացումը նայում: Խնդրում եմ այսօր թարգմանչի դեր ստանձնեք: Ասում են նա հայերեն լավ գիտե:

Ուրախության չափ ու սահման չկար: Եվ ահա մենք երկուսով նստած էեք օթյակի մթության մեջ: Ես ուզում եմ որքան հնարավոր է շուտ տեսնել նրա դեմքը, կողքից ինձ միայն նրա լայն ճակատը ու թավ բեղերն են տեսանելի: Երևի դա է պատճառը, որ ոչ մի կերպ չեմ կարողանում խոսակցություն սկսել: Վերջապես հավաքեցի ինձ ու հայերեն կամայով ասացի.

– Վարպետ ջան, եթե Ձեզ համար ինչ-որ բան անհասկանալի է, պատրաստ եմ թարգմանել:

Նա դեմքը դարձրեց ինձ.

– Մանչ, վատ չի լինի: Երբ վարագույրն արդեն վերջին անգամ փակվեց, Միմոնովը մեզ իր առանձնատանիսկ հրավիրեց, առաջարկելով մի-մի բաժակ կոնյակ խմել Սարոյանի գալստյան առթիվ: շեռո նա ինձ խնդրեց իմանալ՝ դու՞ր եկել է արդյոք ներկայացումը Սարոյանին: Սարոյանն ասաց, որ, այո, հավան է, որ դերասանները խափք բարձր կուլտուրա ունեն, և որ սիրային տեսարաններն ինքը լավ հասկացել է: Եվ ընդհանրապես նա նկատել է, որ հասարակությունը լավ է արձագանքել բեմում ընթացող գործողություններին:

– Վարպետ, ես մեքենայով եմ, իհարկե կարող եմ Ձեզ մինչև հյուրանոց հասցնել, բայց շատ կուզենայի Ձեզ ընթրիքի հրավիրել մեր տուն: Մանավանդ որ ինձ մոտ հիմա հյուր են երկու հայ ճարտարապետներ:

– Մի քիչ հոգնեցի ներկայացումից, երբ լեզուն չգիտես, շարունակ լարվում ես: Բացի դա, առավոտյան հանդիպում ունեմ: Համաձայն եմ, եթե ընթրիքը կես ժամից ավելի չի խլի:

Ես տեղեկություն հրավիրեցի նաև Ռուբեն Միմոնովին՝ կնոջ հետ, ապա զանգահարեցի տուն և հայտնեցի, թե ինչպիսի պատվարժան հյուր եմ բերելու: Ճանապարհին, «Արարատ» ռեստորանի մոտ կանգնեցրի մեքենան: Ստուգեց արդիֆիստրատորին.

– Իմ մեքենայում նստած է ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանը: Մենք որոշել ենք տանը ընթրել: Խնդրում եմ օգնեք:

– Մե՞ծ հաճույքով:

Հինգ րոպե էլ չէր անցել, երբ նա խոհանոցից մի մեծ փաթեթ բերեց:

– Վերցրեք: Մյստեղ կա այն ամենն, ինչ Ձեզ պետք է: Կարծում եմ գոն կեցամ: Փող հարկավոր չէ. դա Մարոյանի համար է:

Ապստամբության հրապարակում, բարձրահարկ մեր շենքի մոտ կանգ առանք:



– Վարպետ ջան, ես այստեղ եմ ապրում, ու այս տան շրջակայքում եղած բոլոր քանդակներն իմն են:

Նա սկսեց ուշադիր զննել դրանք, ապա միանգամայն լրջորեն հարցրեց.

– Հրաշալի է: Իսկապե՞ս այս բոլոր քանդակները Դուք էք ստեղծել: Ուրե՞մ, միլիոնատե՞ր էք:

– Չէ, վարպետ, մեզ մոտ վարձատրությունը շատ ցածր է: Մինչև հաջորդ քանդակն ավարտում ես, փողը վերջանում է:

– Ամերիկայում այսպիսի մի քանդակի համար այնքան են վճարում, որ կարելի է տասը տարի հանգիստ ապրել:

– Իսկ մեզ մոտ, ո՞չ, իսկական արվեստը չի գնահատվում: Մեզ ո՞չ թե որակի, այլ քանակի համար են վճարում: Օրինակ, որքան նկարի չափսը մեծ է, կամ գրքի էջերը շատ են, այնքան արժեքը բարձր է: Դե, իսկ քանդակագործը պիտի ջանա որքան հնարավոր է ծանր գործեր ստեղծել: Սարոյանն սկսեց քրքջալ:

– Դուք ծիծաղում եք: Բայց ես չեմ կատակում: Դժվար է, շատ դժվար է այստեղ այնպիսի գործ ստեղծել, որը և՛ հոգուդ ու սրտիդ հետ խոսի, և՛ ըստ արժանավույն գնահատվի:

– Բայց եթե հոնորարը ստեղծագործության որակը չի խթանում, ապա այն դադարում է ստեղծագործություն լինելուց:

Երբ հասանք տուն, սեղանն արդեն պատրաստ էր: Տասը րոպե էլ չէր անցել, երբ եկան Ռուբենն ու Եվգենյա Միմոնովները նաև: Անսովոր ոգևորություն ու հրճվանք էի ապրում. իմ տանն իսկապես հյուր է Սարոյանը: Մենք ուրախ գրուցում ենք, ու նա մեզ հեղեղում է հարցերով: Ես աշխատում եմ ոչ մի բան բաց չթողնել. չէ՛ որ ստիպված եմ թարգմանել: Իսկ արևմտահայերենը հասկանալի այնքան էլ հեշտ չէ, մանավանդ Մոսկվայում ապրող հայի համար: Բայց ես ջանում էի գուրխ հանել ու երջանիկ էի: Խոսք գնաց ռուսական գրականության, մասնավորապես, Պուշկինի մասին: Եվ Սարոյանն ասաց.

– Սիրում եմ Պուշկինին: Նրա բանաստեղծություններում ես խորապես զգում եմ ռուսական բարձր ոգին: Դա մաքուր պոեզիա է: Ավիտո, որ այն ամենը, ինչ բախտ եմ ունեցել նրանից կարողալ կամ լսել, թարգմանություններ են եղել միայն: Իսկ ես կուզենայի նրա բանաստեղծությունները ռուսերեն լսել: Եվ այստեղ Ռուբեն Միմոնովը բարձրացավ տեղից: Նա դուրս եկավ սեյակի կենտրոն և սկսեց արտասանել Պուշկինի «Օմվը», ապա «Ադմիրալ, ադմիրալ հյու իմ առագաստ» բանաստեղծությունները: Արտասանում էր զարմանալի ներշնչանքով, հանդիսավոր ու վեհապանծ: Ըստ երևույթին Սարոյանն ազդված էր, որովհետև անվերջ ու անվերջ Պուշկինից էր հարցնում:

Ես նկատեցի, որ ում հետ էլ ծանոթանալիս լինեք, Սարոյանն իր մոտ գրում էր սովյալ մարդու անուն-ազգանունը, ծննդավայրը, ծնողների ու լինելը: Իսկ հետո գրույցի ընթացքում իր գրառումները շարունակում էր: Հարցրի, թե ինչու է այդպես վարվում:

– Բա ինչպե՞ս: Դա ինձ պետք է հետագա աշխատանքի համար: Ամեն մարդ իր պատմությունն ունի: Ամեն օր, երբ փողոց եմ ելնում, հատկապես հենց փողոցում, մարդկանց հետ գրուցելիս հետաքրքիր պատմություններ եմ գտնում: Երբեմն մեկ օրվա ընթացքում պատմությունների մի ողջ հավաքածու եմ «ստեղծում»: Պատահում է, հանդիպում եմ որևէ մարդու ու նրա հետ խոսում սկզբում կարծես թե ի միջի այլոց, բայց մեկ էլ այնպիսի հյուրեղ, համով, իսկական պատմություն ես լսում, որ լցվում եմ վայելքով: Եվ հետո երկար ժամանակ քո մեջ կրում ես թե պատմությունն այդ, թե նրա հարուցած տրամադրությունը:

310 Երեք հանդիպում Սարոյանի հետ

...Անցել էր քսան տարի: Մի օր դարձյալ գանգ հնչեց, բայց այս անգամ Կլիմաշկինի փողոցում գտնվող իմ արվեստանոցի դռան գանգը: Բացում եմ դուռը և ու մ տեսնում: Շեմին գրականագետ Լևոն Մկրտչյանն է, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը և ... Սարոյանը: Նրանց հետ միջահասակ մի մարդ կար, որին ներկայացրին որպես ամերիկացի քանդակագործի:

Շնորհակալ եմ Աստուծուց, ես նորից տեսա Սարոյանին, և դարձյալ տրամադրությունս բարձրացավ մեկեն: Անցած տարիների ընթացքում նա շատ էր փոխվել. լայն ճակատը էլ ավելի էր լայնացել, փարթամացել էին և բեղերը, դեմքը ծածկվել էր կնճիներով: Հայացքը, սակայն, առաջվա պես շարժուն էր ու կառչուն, շարժումները՝ կտրուկ ու եռանդուն: Իսկ նրա ծիծաղը, որը մեր դեռ առաջին հանդիպման ժամանակ ինձ արտառոց էր թվում, հիմա բացեց գաղտնիքը. թեթև ու հնչել պոռթկալով հանդերձ, այն իր խորքում անսահման թախիծ էր պարփակում կարծես: Դեռ խոսք ու գրույցի չէինք բռնվել, երբ Սարոյանը հրամայական ասաց.

– Ուր է քո Դավիթ որդին: Դեռ լազերների վրա է աշխատում:

Ես, իհարկե, զանգահարեցի որդուս: Ասացի, որ հետը նաև աղջկան վերցնի: Իսկ մինչ նրանց գալը Սարոյանին խնդրեցի նստել նկարվելու: Ես արդեն պատկերացնում էի նկարը՝ Սարոյանը շարժման մեջ, հանգիստ նստելը խորթ է նրան: Նա համաձայնեց, բայց տասը ռուպե հագիվ դիմացով: Այնպես որ, չնայած իմ ողջ լարմանն ու սևեռումին, հագիվ հասցրի խառնվածքն ու նմանությունը որսալ միայն: «Ինչպե՞ս և նկարեմ այս աչքերը. դարավոր թախիծ կա նրանցում, խնհեր, ապրու՜մներ» – ասացի նկարելու ժամանակ: Սարոյանը պատասխանեց.

– Իսկ ես, Նիկողոս, ուշադիր Ձեր աչքերին էի հետևում. նրանք վառվում են աշխատելու ժամանակ: Եթե ես նկարիչ լինեի, հաճույքով կնկարեի Ձեր դիմանկարը: Ինչպես եմ նախանձում իսկական նկարչի վարպետությամբ օժտված մարդկանց: Համր լեզուն հրաշքներ է գործում հանկարծ: Ես էլ ժամանակին նկարելու փորձեր եմ արել: Երբեմն, երբ ինչ-որ բան ստացվում էր, մեծ բավականություն էի ստանում: Բայց ինձ մտտ գունավոր, վերացական նկարներ են ստացվում միայն: Հենց հիմա Ձեր թոռնիկի համար վերացական մի նկար կծնվի: Թուղթ ու ածուխ տվեք ինձ: Նա նկարեց հագիվ երկու ռուպե: Աննկարագրելի ինչ-որ բան ստացվեց: Ներքևում գեղեցիկ ձեռագրով անգլերեն ստորագրեց ու ասաց .

– Սա նվեր Ձեր թոռնիկ Լիլիանային:

– Վարպետ, կարող եք բացատրել, թե ի՞նչ նկարեցիք: Ինձ՝ նկարչիս համար անհասկանալի է:

– Վարժում եք ինձ համար հասկանալի՞ է: Սա ապագայի համար է: Ժամանակ կանցնի, թոռնիկդ կլեծանա, և նրա համար արդեն հասկանալի կլինի: Անցել է տասը տարի, այդ նկարը կախված է իմ արդեն մեծ թոռան սենյակի պատին, և նա հպարտանում է, որ այն իր համար նկարել է Սարոյանը:

Նա վերցրեց իմ նկարը և ասաց .

– Վարպետությունը անհրաժեշտություն է յուրաքանչյուր մարդու

համար, ամեն գործի մեջ. և ոչ պակաս, քան՝ նկարչության: Պետք է, որպեսզի քո կյանքի տերը դառնաս: Այդժամ միայն քո ստեղծագործության տերը կդառնաս նաև:

Մի քանի օրից Երևան մեկնեցի: Կնոջս հետ գնացել էինք համերգի: Երբ համերգից հետո դուրս էինք գալիս, ձեմասրահում տեսա Սարոյանին: Մոտեցա, ողջունեցի: Անմիջապես հարցրեց .

– Երբ եք եկել, որքա՞ն էք այստեղ մնալու:

Մեզնից երեք քալ այն կողմ կանգնած էր հոչակավոր գրողին ուղեկցող պետական պաշտոնյան: Նա խորհրդային այն աշխատողների թվին էր պատկանում, որոնք ողջ աշխարհում շրջագայելուց հետո անգամ տարրական քաղաքավարություն ձեռք չէին բերում: Նա հեռվից բարձրաձայն ասաց .

– Պարոն Սարոյան, ուշ է արդեն, տանն սպասում են, շտապեք:

Սարոյանն այնպես ձևացրեց, ասես այդ խոսքերն ամեննին իրեն չեն վերաբերում, անգամ չընդհատելով խոսակցությունը: Պաշտոնյան նորից կրկնեց.

– Պարոն Սարոյան, խնդրում եմ Ձեզ, մի ուշացրեք:

Եվ այստեղ Սարոյանը դեն նետեց բոլոր «օրինականությունները»: – Ո՛չ, ես առանց Նիկողայի ոչ մի տեղ չեմ գնա: Նախ նրան հրավիրեք և հետո միայն ինձ:

Ակնհայտորեն շիտոյված պաշտոնյան շտապեց ինձ ու կնոջս ևս իրենց տուն հրավիրել: Իմ վիճակի մեջ մտնելով՝ Սարոյանը համառորեն կրկնում էր .

– Նիկողայ, առանց քեզ ես ոչ մի քալ չեմ անի: Գնանք միասին:

Ճանապարհորդ-պաշտոնյայի տանը սեղանը ձկնովում էր զանազան խորտիկների ներքո: Բայց նա առաջարկեց նախ նկարների իր հավաքածուն նայել, որը սկիտոքահայ նկարիչներից էր հավաքել: Զանազան նկարների հետ այնտեղ Գառզուի ուլկ կտափները կային: Սարոյանը նկատեց, որ այդ աշխատանքները են առանձնահատուկ ուշադրությամբ և երկար եմ նայում: Մի կողմ տարավ ինձ ու հարցրեց.

– Նիկողոս, Գառզուն Ձեզ դու՞ր է գալիս:

– Ես Գառզուին վաղուց գիտեմ, և նա հիացնում է ինձ:

– Իսկ իմ կարծիքով նա շատ անբախտ նկարիչ է: Այո, անբախտ:

Նա մի անգամ մեկընդմիջո գտել է իր արտահայտչաձևը և այլևս ի վիճակի չէ դրանից հրաժարվել: Նա այդ ձևի գեղին է դարձել, և այն կործանում է նրան: Հիշե՛ք Պիկասոյին: Ինչպես էր նա ժամանակի ընթացքում առանց վախենալու փոփոխվում: Նա չէր ուզում ինքն իրեն նմանակել: Դա շատ վտանգավոր է արվեստագետի համար, Նիկողոս:

Այս կարծիքը լսելուց հետո նորից սկսեցի գննել Գառզուի նկարները: Այո, ճիշտ է Սարոյանը. չնայած մեծ վարպետությանն ու ճաշակին, նա կրկնվում է:

...Դա մեր վերջին հանդիպումն էր: Եվ իմ հիշողության մեջ մնացել են ճոխ սեղանը, հրաշայի նկարները, գիշերային Երևանը: Սարոյանը կտակեց այստեղ, Հայոց հողում թաղել իր մեծ սրտի մի կեսը, մյուսը՝ Կալիֆորնիայում: Այդտեղ էլ հանգչում է այն...

Նիկողայ Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, ՍՍՅՍ Ժողովրդական նկարիչ

Սերգեյ Նիլով

– Милый, как ты? Расскажи о себе.

В маленькой комнате ночь и немного света. Стол у окна – отплывает от кромки лета в осень. Косится луна сквозь шторы. Длинная ночь обещает в такую пору долгих раздумий и с привкусом грусти чай, сигареты... Так что же, пусть и эти неловко в мечты обреченный мысли бродят в сомнеьях тревожно по листьям. Милая, что рассказать о себе еще – я не знаю. За сентябрем наступает октябрь... Постигаю выводы – буква за буквой – в надежде найти себя. Может быть, стих воплотится, а может, все зря. Ах, все слова, что прилягут к отрезку в белом!.. Яблоку тоже надо попеть, чтобы стать зрелым.

Я буду бродить переулками города темными, Заглядывать в окна – не это ли окна друзей. Я буду метаться ночными звонками бессонными, Тревожа чужих и совсем незнакомых людей. И кто-то, смеясь, мне предложит свиданье у входа... У входа во двор до утра просидит со мной пес, Бродячий, как я, как сырая от слез непогода, Лохматый и старый, как стертые спицы колес.

Из цикла «ПИСЬМА ДРУГУ»

На маленькой даче (приедешь, и ты – удивись!) повсюду цветы и такой безмятежный покой... Лишь ветер тревожит верхушки деревьев, и слишком покажется небо бескрайним над головой.

Хозяин приветлив, гостей, как друзей, привечает, а ты позабудешь, какое столетье идет, когда при свечах он про дальние-дальние страны, забытые временем, свой разговор поведет;

и ты ощутишь вдруг, до боли, извечную правду, что все – суета, а проклятая тяга к деньгам, машинам, удобствам и женщинам... Друг, понимаешь, никчемный пустяк, безнадежный, как мусор и хлам.

Я встречу тебя. Электричка стоит у платформы всего две минуты, так что ты смотри – не зевай. Дай знать перед выездом, по телефону. Ну, где ты увидишь такой удивительный край?!

P. S.

Цветущий июль полыхает приволием лета. Дожди хоть и редкость, но в этом чудесном году они все так к месту, и жаркое солнце раздето... И сам у себя ты окажешься в вечном долгу.

Сергею НИЛОВУ – всего 55 лет

...Он очень рано начал писать стихи. Правда, сам признается, что первую тетрадь сжег, но уже и те стихи успели прозвучать по всесоюзному радио. Печатается с 1980 года. Первые поэтические опыты были отмечены Е. Евтушенко и А. Вознесенским. Первый поэтический сборник – звание Всероссийского лауреата. Стихи переведены на украинский, армянский и словацкий языки. Вошли в изданную в Словакии «Антологию русской поэзии».

Отмечен литературными премиями Союза писателей, Московской писательской организации, Академии литературы, а также «Россией православной» медалью «Наше наследие» за многолетнюю творческую деятельность, направленную на возрождение лучших русских традиций в литературе и искусстве.

Стихи публиковались в периодике многих городов России, в коллективных сборниках, журналах, альманахах, антологиях («Вестник российской литературы», «Академия поэзии», «Антология современной лирики», «Антология современной поэзии», словацкой «Литературной газете», международных изданиях «Горцарар», «Меценат и мир», «Бархатистый запах дождя» и др.), звучали в радио- и телепередачах.

Автор драматургических произведений, поставленных на сценах Ярославля, Иркутска, Калуги, Москвы.

Переводчик произведений словацких, французских и японских поэтов, пьес драматургов Кореи («Корейский театр», изд. «ГИТИС»; пьеса «Свадьба» Ли Ган Пека поставлена на сцене московского театра «Вернисаж»).

«И вечер превращается в стихи...» П. ТРИШКИН

Язык сохраняет традиции свои через «средство выражения» – судьбу поэта. Говорить о судьбе при жизни поэта трудно, но это позволяет сделать «актер», – другая сторона творчества Сергея (долгие годы для меня Анатолевича, а теперь не менее долгие годы просто Сергея). Ибо актер не имеет права работать «в стол», его судьба – его роли, определяемые рамками его жизни. Именно артистизм выразительности языка привносит в строки поэта то, чем язык жил и живет всегда. Именно простота и артистизм поэтического языка является прямой целью русской поэзии и предназначением ее во всей мировой истории...

Роман ИНДЫК, актер театра и кино

Вечный странник Сергей Нилов к размеренной жизни обывателя не стремится. Ему подавай подъемы, перепады, «сучки и задоринки». Лет двадцать тому назад он «напугал» Калугу своим театром-лабораторией, в котором предлагал молодежи «изобретать колесо и создавать индивидуальный вечный двигатель». И цену за возможную популярность объявил: «сизифов труд».

– Ты же еще – поэт и даже переводчик. Знаю, что корейские драматурги обязаны тебе тем, что с их пьесами познакомились российские читатели-почитатели из числа режиссерского народа. И японскую, и словацкую поэзию ты переводил...

«Вся жизнь моя – эксперимент...» В. УШАКОВА

Он действительно чем-то напоминает пылкого и наивного героя Сервантеса: высокий рост, горячие черные глаза, характерная актерская внешность... И вечный поиск чего-то нового, неизведанного, как главная составляющая его заводной, «рыцарской» натуры! Не случайно нашумевшая в конце 80-х годов театральная студия, которой он руководил, называлась театром-лабораторией. В общем – это Сергей Нилов, актер, режиссер, сценарист, поэт...

«Последний из Дон Кихотов» Д. КУЗНЕЦОВ

Вот уже полчаса сижу и размышляю, как написать о событии, произошедшем на днях, и в голове вертится одна и та же фраза. Вот поэтому я и решила вынести ее в заголовок (см. заголовки).

...Просто удивительно, как один человек, имеющий под рукой пустую сцену и самый минимум изобразительных средств (чемодан, пиджак, пюпитр), так органично обживает пространство. Эта



литературная композиция представляет собой, по сути, моноспектакль – жанр весьма трудный. Нилов справляется с ним блестяще!

«Сергей Нилов хорош!» М. УЛЫБЫШЕВА


В один из дней Второго международного фестиваля поэтов знаменитый российский поэт Андрей Вознесенский сказал автору:

– У Вас есть талант, бесспорно. Нужен успех. Я знаю, что это такое. У меня есть и талант, и успех. Поэтому, – и он сделал надпись на подвернувшейся ему под руку фестивальной программе, адресованную нашему земляку, – желаю успеха Вам.

«Похвала мэтра», редакционная заметка, газета «Доброе утро, Калуга!»

Спектакли, фильмы, роли...
Круг близких и друзей –
Спасение от боли
И от ненастных дней.
Вы – эмоциональны.
Призвание – артист.
Как будто бы случайно
В руках – бумаги лист.
И вдруг, совсем как чудо, –
Рождение строки.
Откуда же, откуда
Приходят к нам стихи?
Дарованные свыше,
Являются на свет,
Их кто-нибудь услышит,
А кто-нибудь и нет,
Но вопреки всей боли
И грусти вопреки
У вас есть фильмы, роли
И светлые стихи!

Л. ОХОТНИЦКАЯ



320

Сергей НИЛОВ

Momento

У вокзала
три цыганки
предложили погадать –
обещали
без утайки
мне судьбу всю предсказать
и просили-то так мало:
сигаретку, медный грош...
Молодые две болтали
в перебивку:
– Не тревожь,
ты сердечко понапрасну.
– Отведи печаль рукой.
– Путь-дорожка...
– Линий много...
– Все мы знаем, дорогой.
Что постарше,
покачала удивленно головой,
улыбнулась,
прошептала:
– Иди с миром... Бог с тобой...

* * *

По дому бродит тишина
И кутается в ночь.
От двери до стены-окна,
И час за часом – прочь.

Ей слышен каждый шорох, вздох,
Сомнение строки.
От тишины такой оглох,
По-воровски

Лист белый на краю стола –
Бесстыден и раздет –
Крадет все чувства и слова
В хитросплетенье лет.

* * *

И в этом бесконечном никогда
Не затеряться, а доволлотиться,
Дожить, истаяв, как зарница,
И зоряницей вспыхнуть навсегда.

* * *

...записал я по привычке
на листах своей души
расписание электрички –
все дороги хороши;

будет повод – пригодится,
и тогда уеду я,
чтобы в счастье заблудиться
до седого декабря.

* * *

Седой сентябрь
склонился у порога
И, прежде чем зарыться в снег,
Он – так приветлива дорога –
Решился в юность на побег.

И листья пробовали долго
Хоть на полшага, но бжеать,
А их пригладила дорога
И до весны укрыла спать.

* * *

1

Я родился и вырос в суровом предместье,
где улыбка фальшиво скрывает подвох,
а кулак утверждает достоинства чести
неожиданно резким ударом под вздох.
В закоулках трущоб приходилось сражаться,
слезы с кровью мешая,- побеждал, бывал бит;
жизнь учила всегда за других заступаться,
не прощая предательства и низость обид.

2

Как хотелось мне жить там – где грай
оголтелых грачей, там – в сосновом бору,
но судьба повелела: «Бери и играй
роль, которую я тебе дарю».

Я метался в пространстве, менял адреса
и плутал в коридорах больницы,
выходил на заброшенных станциях, но поезда
все приходят к вокзалам,
вонющим потом бомжей и блудниц.

Ах, оковы предместья! Из века и в век
ничего не меняется – «картина все та ж»:
Если ты пройдоха – то «шеловек»,
а все остальные – «так... блажь».

3

Я устал. Мне уже за сорок.
Седина в волосах, и в ребро – бес.
Я построил корабль, предстоит зимний волок –
переправить его и плыть до небес.
И теперь я знаю, где юг, где восток.
И теперь я знаю, куда плыть.
Только время неумолимо канет в песок,
уменьшая значение слова «быть».

* * *

N. N.

Вот и осталось от осени: только промозглая изморось,
Сад обветшалый и несколько яблок мороженных.
В окна стучится рябина веселыми брызгами –
Всех угощая набухшими красными гроздьями.

Век на исходе. И что там? Гадаем с надеждою –
Будет ли счастье?... А может, все так же, по-прежнему –
Сад обветшалый и несколько яблок мороженных,
Сорванных ветром и снегом слегка припорошенных.

«Горцарар»

Издается с июля 1999г.

Автор проекта и учредитель –
Ваграм БЕКЧЯН

Зам. гл. редактора -
Роза ГУЛЯН

Գլխ. խմբագրի տեղակալ՝
Ռոզա ԳՆԻԼՅԱՆ

ИЗДАТЕЛЬ

Издательский Дом

«ШАГАНЭ»

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован
в Министерстве Российской Федерации
по делам печати, телерадиовещания
и средств массовых коммуникаций
Регистрационный номер
ПИ № 77-5015

Авторские материалы
не рецензируются и не возвращаются.
Переписку с читателями редакция
не ведет. Мнение авторов может
не совпадать с мнением редакции.
Материалы со знаком **Ч** публикуются
на правах рекламы.
Редакция не несет ответственности
за содержание рекламных объявлений.

ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов» г. Калуга, ул. Московская 256.
Формат А3, объём 4,0 п.л.
Тираж 1 500 экз. Зак. № 1490.

Территория распространения:
Российская Федерация, страны СНГ,
зарубежные страны.

В номере использованы материалы
«НОВЕ КОВЧЕ», «АЗГ», «АРАВОТ»,
«ГА», «ЕТЕР», «ФАЙКАКАН ЖАМАНАК»,
«ИРАВУНК», «ВОЗНИ», «НОВОЕ ВРЕМЯ».

Цена свободная.

Адрес издательства и редакции:

248001, г. Калуга,
ул. Суворова, 160.

Тел.: (4842) 56-59-29, 59-17-73.

E-Mail: gortsarar@list.ru

факс (4842) 565-929,

www.gortsarar.ru



E-Mail: gortsarar@list.ru